

СИГНАЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ

Ա.Ս.ԴՈՐՈՎ



ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3 ԿԱՍՆ  
ՄԵՐԿՐՈՐ

ԱՍԻԱ (ԱՊՐԱՅԻԱՆ), ԱԳՐԻԿԱ, ԱՄԵՐԻԿԱ, ԱՍՏՐԱԼԻԱ

ԿՈՒՆՏԱՆԵՍԱՅԻՆ Ա ԲՐԻԳԱԴԱՅԻՆ  
ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՍՐԱԳԻՐՆԵՐԻ  
ՀԵՌԱԿԱ ԴԱՍԵՆԹԱՅՆԵՐ

91(075)

7-66

ՀԱՅԿԻԿԱՆ ԽՍԵ-ՍԿԵ ԶՐԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԵՐԿՐՈՐ  
1939



91(075)

7-66

ul

## ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա Ս Ի Ա

### ՀԱՄԱՌՈՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Ասիան— այդ ամենամեծ աշխարհամասը— զբաղեցնում է 44 միլիոն քառակուսի կիլոմետր տարածությունը: Նա ավելի մեծ է քան Յեմբուպան և Աֆրիկան միասին վերցրած: Ասիայում բնակվում է ամբողջ յերկրագնդի ազգաբնակչության 1/2-ից և ավելին— 1 միլիարդ 100 միլիոն մարդ:

Ասիայի հյուսիսային և մասամբ կենտրոնական մասերը խորհրդային Միության տերիտորիան են հանդիսանում:

Ասիան Յեմբուպայից բաժանվում է պայմանական սահմանով, վերը անցնում է Ուրալյան լեռներով, Ուրալ գետով, Կասպից ծովով և Կովկասով:

Կովկասից հարավ—արևմուտք Ասիան վերջանում է՝ Սև, Մարմարա, Եգեյան և Միջերկրական ծովերով: Այստեղ գտնվում է Փոքր Ասիա քերակղզին: Ավելի հարավ Սուեզի պարանոցը Ասիան միացնում է Աֆրիկայի հետ: Նրա վրայով փորված (1869 թ.) Սուեզի ջրանցքը, Միջերկրական ծովը միացնում է Հնդկական օվկիանոսի հետ (Կարմիր ծովի միջոցով): (Ասիայի ծովերը տես № 1 քարտեզի վրա):


Հնդկական օվկիանոսը Ասիային վերջանում է հարավից: Ասիայի հարավում կան յերեք մեծ թերակղզիներ, Արաբիան, Հնդկաստանը և Հնդկաչինը: Արաբական թերակղզին հարավից վերջանում է Արաբական ծովով, արևելքից՝ Պարսկական ծովով, արևմուտքից՝ Կարմիր ծովով: Կարմիր ծովը բաժանում է Արաբիան Աֆրիկա-





ից և իր հյուսիսային ծայրով մտնելով և Սուեզի ջրանցքին: Հնդկաստանի և Հնդկաչինի մաս դառնում է Բենգալյան ծոցը: Հնդկաստանից ավելի հարավ ընկած է Ցեյլոն կղզին:


Ասիայի արևելյան ափերը փոքրոքվում են հազադ ովկիանոսով և նրա մասերով՝ Հարավ—Չինական, Արևելա—Չինական, Ճապոնական, Ախտաի և Բերինգյան ծովերով: Խաղաղ և Հնդկա-



Նկար 1. Ասիայի ծովերը, կղզիները, քերակղզիները և գետերը:

կան ովկիանոսների միջև ընկած է կղզիների մի մեծ խումբ՝ Մալայան Արշիպելակ կամ Ինդոնեզիա: Այդ կղզիներից խոշորագույններն են— Բորնեոն, Սումատրան, Յավան և Ցեյլեբը: Սու-մատրայի և Հնդկաչինի միջև յեղած Մալակկայի նեղուցը միացնում է Խաղաղ ովկիանոսը Հնդկականի հետ: Ասիայի մայր ցա-

քից դեպի արևելք փոխված են Ճապոնական կղզիները, փոքրեցիկ դրամիորը Հոնսյուն և: Հոնսյունի հարավային ծայրին հանգձիան բարձրանում է Կորեյա քերակղզին: Ճապոնական կղզիներից դե-պի հյուսիս ընկած է Սախալին կղզին, փոքր բաժանված է մայր ցամաքից Թաթարական նեղուցով: Սախալինի հյուսիսային մասը պատկանում է ԽՍՀ Միությանը, հարավայինը՝ Ճապոնիային:



Նկար 2. Ասիայի լեռները և սարահարթերը:

Ախտաի և Բերինգյան ծովերի միջև բարձրանում է խորհրդային քերակղզի կամչատկան:

Ասիան Հյուսիսից փոքրոքվում է Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսով, փոքր նրա ափերին գոյացրել է չորս ծով— Կարա-յի, Լապտևների, Արևելա—Սիբիրական և Զուկոտյան: Այդ ծովերը իրարից բաժանված են հետևյալ կղզիներով.— Հյուսիսա-յին յերկրով, Նար—Սիբիրյան և վրանգելի կղզով:



Հյուսիսային Սառուցյալ ուղիներում միանում է խաղաղ  
ուղիներին հետ Բերինգյան նեղուցի միջոցով: Բերինգյան նեղու-  
ցի արևելյան ափը, դա ամերիկայի մայր ցամաքի մի մասն է:

Ասիայի հյուսիսում գերակշռում են հարթա-  
վայրերը— Արևմտա Սիբիրական հարթա-  
վայրը և Միջին Սիբիրական բարձրավանդա-

կը: Կասպից ծովից դեպի Արևելք ձգվում է Արալո— Կասպիա-  
կան, կամ Թուրանի հարթավայրը: Այդ հարթավայրերը հարավից  
գոտեվորված են յերկարությամբ և բարձրությամբ վիթխարի  
լեռնաշղթաներով, վորոնք ձգվում են Կասպից ծովի հարավային  
ափից մինչև Բերինգյան նեղուցը (առանձին գագաթները հաս-  
նում են 5—7 կիլոմետրի՝ ծովի մակերևույթից): (Տես քարտեզը,  
Նկ. 2): Նշենք այդ լեռներից ամենաբարձր լեռները. Պամիրի լեռ-  
ները, վորոնց մեջ ամենաբարձր գագաթը ԽՍՀՄ-ում է— Ստա-  
լին լեռնադաղաթը 7½ կմ.), Տյան—Շանը, Ալտայը, Սայան-  
յան, Յարբուսովյան և Ստանովյան լեռնաշղթաները:

Այդ լեռների հետևում, Սիբիրական հարթավայրից դեպի  
հարավ, ընկած է Մոնղոլական (Գոբի անապատով) և Տիբետա-  
կան բարձրավանդակները: Նրանց բաժանում է Կուեն—Լուն  
բարձր (7 կմ.) լեռնաշղթան: Տիբետից դեպի հարավ անցնում  
են աշխարհում ամենաբարձր լեռները— Հիմալայանները, վորոնց  
գլխավոր գագաթը— Եվերեստը հասնում է ծովի մակերևույթից  
8,8 կմ. բարձրության:

Ասիայի արևելյան մասում գտնվում են Չինական լեռները և  
Արևելա— Չինական հարթավայրերը:

Ինչպես արդեն նշվեց վերևում, Ասիայի նշա-  
նակալից մասը կազմում է մեր ազգային տա-  
կան հայրենիքի տերիտորիան: Այստեղ վոչըն-

չացված է մարդու շահագործումը մարդու կողմից՝ և ազգային  
թշնամանքը, այստեղ լիցիում է ուրախ, ազատ սոցիալիստական  
աշխատանքը, յերջանիկ կյանքի Ստալինյան Սահմանադրության  
հիման վրա ազատ, իրավահավասար ժողովուրդների յեղբայրու-  
թյունն ու բարեկամությունը:

Ասիայի մյուս շրջանների գերակշռող մասը, Արևելյան, հա-  
րավային, մասամբ ել կենտրոնական շրջանները գաղված են  
կեղեքվող յերկրներով, իմպերիալիստների կողմից հարստահար-

վող գաղութներով և կիսագաղութներով: (Տես «աշխարհագրու-  
թյուն» առաջին մաս Եջ՝ 20—21): Գաղութների թվին է պատկա-  
նում, որինակ, Կորեան, Հնդկաստանը, Յեյլոնը, Ինդոնեզիան:  
Կիսագաղութների թվին, վորոնք ձևակերպվում են ինքնուրույնու-  
թյուն են պահպանում, բայց դործնականում զրկված են դրանից,  
պատկանում է որինակ, Սիամը, Արաբիայի մեծ մասը: Ասիայի  
խոշորագույն յերկրներից— Չինաստանը, բազմախիտն ազգա-  
բնակչությունն մեծ դալրութիւն ալթմ հերոսական պալքարի  
յե յերել ճաղոնական բռնակալների դեմ:

Առանձնահատուկ դրության մեջ են Մոնղոլական և Տուվին-  
յան ժողովրդական հանրապետությունները: Ժողովրդական հե-  
ղափոխության հետևանքով և խորհրդային միության յեղբայրա-  
կան ոգնության շնորհիւ նրանք անկախություն ձեռք բերին:  
Այդ հանրապետությունները պատրաստվում են գաղափարական  
կապիտալիստական ուղու անցմանը:

Ասիական մայր ցամաքից դեպի արևելք գտնվող կղզիների  
վրա ընկած է Ճապոնիան— ամենագրեխիլ իմպերիալիստական  
յերկրներից մեկը, Ֆաշիստական յերկրներ— Գերմանիայի և  
Ֆրանսիայի դաշնակիցը:

Թվենք Ասիայի հիմնական յերկրները, բացի ԽՍՀՄ-ից  
(ակտած արևմուտքից) Թյուրքիա, Սիբիա, Պաղեստին, Իրան,  
Սաուդիա, Իրաք, Ալիանստան, Բրիտանական Հնդկաստան, Յեյ-  
լոն, Սիամ, Ֆրանսիական Հնդկաստան, Մալիա, Հոլանդական  
Հնդկաստան (Ինդոնեզիա), Ֆիլիպինյան կղզիները, Ճապոնիա,  
Կորեա, Չինաստան, Մոնղոլական ժողովրդական Հանրապետու-  
թյուն, Տուվինյան ժողովրդական Հանրապետություն: (Տես  
քարտեզ— նկար. 3, 5):

1. Թվեցեք և սովորեցեք գտնել քարտեզի վրա  
ԱՏՈՒԳԻԶ ՆԱՐՑԵՐ ալն ուղիներն ու ծովերը, վորոնք վոզո-  
նեվ ԽՆԴԻՐՆԵՐ դում են Ասիան հյուսիսից, Արևելքից, հարա-  
վից և հարավ— արևմուտքից, նույնպես և նրանց մեջ գտնվող  
կղզիները և թերակղզիները:

2. Թվեցեք և ցույց տվեք քարտեզի վրա Ասիայի հարթավայ-  
րերը, բարձրավանդակները և լեռները:

3. Թվեցեք և սովորեցեք գտնել քարտեզի վրա Ասիայի յեր-  
կրները:



## ԹՅՈՒՐՔԻԱ

Տարածությունը՝ 772 հազար ֆուտ. կիլոմետր, բնակչությունը՝ 16 միլիոն: Այդ քվում Թյուրքիայի յեկընդակամ մասը. տարածությունը՝ 24 հազար ֆուտ. կիլոմետր, բնակչությունը՝ 1,1 միլ. մայրաքաղաքը — Անկարա:

ԲՆԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Թյուրքերի մեծագույնը ե փոքր Ասիա քերակը և նրան արևելքից սահմանակից մարդը, բացի դրանից, Յեմլուպայում՝ վոչ մեծ մաս

Բալկանյան քերակագույն: Թյուրքերի մեծագույնը ե Միջերկրական ծովով և նրա մասեր հանդիսացող՝ Եգիպտոս, Մարմարի և Սև ծովերով: Մարմարի ծովը և նրա «դարպասները» — Դարդանեղի և Բոսֆորի նեղուցները, ամբողջովին ընկած են Թյուրքական տերիտորիայում: (Տես «Աշխարհագրություն» առաջին մաս, էջ 65):

Փոքր Ասիայի մակերևույթը սարահարթ ե (Փոքր ասիական): Նրա Հյուսիսում, հարավում և կենտրոնում անցնում են լեռնաշղթաներ: Թյուրքիայի Արևելյան մասը զբաղված ե Հայկական քարձեղքավանդակով: Այստեղ ԽՍՀՄ-ի և Իրանի սահմանի վրա գտնվում ե Արարատ սարը (5,1 կմ): Թյուրքիայի Յեմլուպական մասը ունի հարթ մակերևույթ:

Կլիման Միջերկրական, Եգիպտոս և Մարմարի ծովերի ափերին միջերկրածովային ե, — տաք անձրևոտ ձմեռ, կլիկիչ չորային ամառ: Սև ծովի Թյուրքական ափին ամառը այնքան ել չոգ չե, և ափերի համասարաչափ են բաժանված տեղումները ամբողջ տարվա ընթացքում: Փոքր Ասիայի ներքին չրջաններում կլիման ցամաքային ե. ցուրտ ե ձմեռը և չոգ՝ ամառը: Այստեղ չոր ամառատան ե, տեղ—տեղ կիսաանապատ:

Թյուրքիան մեծ դետեր չունի: Թյուրքիայի հանածոների հարստությունները քիչ են ուսումնասիրված, բայց հայտնաբերված են քարածուխ. և մետաղներ — յերկաթի, պղինձի, արծիճացիների հանքեր:

ԲՆԱԿԱՆԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ  
ԿԱՐԳԸ

Թյուրքիայի 16 միլիոնանոց բնակչության մեծամասնությունը — քյուրքեր են: Յերկրի արևելյան մասում ապրում են նաև ֆուրդեր

և հայեր, Ստամբուլում (Յեմլուպական մաս) Թյուրքերից բացի կան հույներ, հայեր, հրեաներ և ուրիշներ:

Մի ժամանակ Թյուրքիան (կամ ինչպես այն ժամանակ կոչվում եր — Ուստումայան կայսրությունը) մեծ պետություն եր: Մինչև 1914 թվի նախքան եր Միջերկրյան, Պակիստանի, Իրանի և Արաբիայի, մինչև 1877 թի-

վր, զբաղեց բաշի, համարյա ամբողջ Բալկանյան թերակղզու, իսկ մինչև 17-րդ դարը նույնպես և ամբողջ Սև ծովի ափերին, հյուսիսային Աֆրիկային:

Միջնադարյան հետամնաց կարգերը Ուստումայան կայսրությունում, կայսրություն, վորը կառավարում ելին ինքնակալ կերպով Սուլթանները, յերկրորդ տարան դեպի անկում: Բազմաթիվ պատերազմներում կրած պարտությունները նրան զրկեցին իր մարդերից, մեկը մյուսի հետևից: Ուստումայան իմպերիալիստները քայքայված Թյուրքիային ստիպեցին համալսարանային պատերազմի մեջ մասնել՝ ընդդեմ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի:

Գերմանիայի և նրա դաշնակիցների պարտություններից հետո Թյուրքական կառավարությունը ընդունեց հաշտության բոլոր պայմանները, վորոնք թելադրում ելին հաղթանակած անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները: Այդ պայմաններում, Թյուրքիայի կողմից Արաբիան, Միջերկրյան և Իրաքը կորցնելուց բացի, կային կետեր նաև Փոքր-Ասիայի ափերի մասերի, Իզմիր քաղաքով, և յիվընպահան Թյուրքիայի մասերից Հունաստանին հանձնվում մասին, ինչպես նաև Դարդանեղի և Բոսֆորի վրա անգլո-ֆրանսիական հսկողություն սահմանելու մասին: Ի պատասխան այդ պայմանների ստորագրման յերկրում բարձրացավ ազգային շարժում: Անկարա քաղաքում գնեքալ Քեմալ-փաշայի (Քեմալ Աթաթյուրք) գլխավորությամբ ստեղծվեց ազգային կառավարություն: Քեմալ-Փաշայի հրամանատարությամբ Թյուրքերը 1922 թվին ջախջախեցին Հունական զորքերին, վորոնք գրավել ելին արդեն Իզմիրը և ժամանակություն ելին ստանում Անգլիայից: Թյուրքիայի համար այդ դժվարին ժամանակները միակ յերկրորդ, վորը ընդունեց ազգային կառավարությունը և աջակցեց նրան, ԽՍՀՄ-ն եր 1923 թվին իմպերիալիստական պետություններն ել հարկ համարեցին ճանաչել, նոր Թյուրքիայի կառավարությունը: Նախկին պայմաններից չնդալ հայտարարվեց տերիտորյալ դիջուսները՝ Հունաստանի ոգտին և նեղուցները հսկողության յենթարկելը, ինչպես նաև Թյուրքիայի անկախությունը սահմանափակող կետերը:

1923 թվին Թյուրքիան հայտարարվեց հանրապետություն, սրիդիզենտի գլխավորությամբ: Կազմակերպված են պառլամենտ և կառավարություն (մինիստրների խորհուրդ): Հետագայում անց ել (կացված մի շարք կարևոր ռեֆորմներ — միլիթարիզմը և իր նախկին իշխանությունից, դյուդատնտեսությունից վերացված ե դեպետների տուրքը՝ վորը ճգմում եր դյուդացիներին, վերացված ե բազմակուլությունը, կանայք ստացել են վորոշ իրավունքներ, մտցված ե նոր ալֆամիտ (այբուբեն) — լատիններեն, վորը ուսումնասիրելու համար ավելի հեշտ ե, քան նախկին արաբականը, բացված են շատ դպրոցներ, մտցված ե յեմլուպական հազուստ՝ արգելելով տղամարդկանց Ֆեզիկներ (գլխարկ) կրել, իսկ կանանց՝ — չադրա, վորը ծածկում ե նրանց դեմքը: Վերացված են տարերկրացիներին տրվող արտոնությունները: Մի շարք մի-



ընդհանուր են ձեռնարկված ֆինանսների ամբողջական և արդյուն-  
նաբերության ստեղծման համար:

#### ՏՆՏԵՍՈՒԹՅ ՈՒՆԸ

Թյուրքիան զերազանցապես զյուզատնտեսա-  
կան յերկիր է, թեպետ վերջին տասնամյա-  
կում նրանում զարգանում է արդյունաբե-  
րությունը: Հողի յերկու յերրորդը պատկանում է կալվածա-  
տերերին և կուլակներին: Գյուղացիության մեծ մասը վար-  
ձակալում է հողը: Հողագործությունը Թյուրքիայում շատ  
հետաւնաց է: Վարում են փայտե արորով, վորը յերկաթե խոփ  
ունի: Բերքաւովությունը շատ ցածր է: Մշակվում է գլխավո-  
րապես հացահատիկային կուլտուրաներ՝ ցորեն և գարի,  
տեխնիկական կուլտուրաներից՝ ծխախոտ, բամբակ, խաշիտաշ,  
պտղատուները՝ թուզ, խաղող, ձիթապտուղ, նարինջ և այլն: Տեխ-  
նիկական և պտղատու կուլտուրաների ցանքերը կենտրոնացված  
են ծովափերին, վորտեղ մեղմ, տաք է ձմեռը և շատ անձրևներ  
են տեղում: Մարմարա ծովի ափերին զարգացած է շերեմապա-  
հությունը:

Թյուրքիայի տերիտորիայի մեծ մասը, ներքին չորային  
ըրջաններում, չի ոգտագործվում հողագործության համար,  
այլ հատկացված է արատաւեղերի համար, այնքան վորքան  
այնտեղ հողագործությունն անհնար է առանց արհեստական  
վոռոգման, վորը մեծ ծախսեր է պահանջում: Թյուրքիայում  
պահում են վոչխարներ, այծեր, գոմեշներ, յեղներ, ուղտեր,  
և ավանակներ: Շատ վոչխարաբուծներ, հատկապես արեւելքում,  
վարում են քոչվորական կյանք:

Արդյունաբերությունը համեմատաբար աննշան է: Կիսա-  
տնայնագործական տիպի ձեռնարկություններից բացի, վորոնք  
մշակում են գորգեր և գործվածքներ, իՍՀՄ-ի ոգնությամբ  
կառուցված են յերկու խոշոր տեքստիլ կոմբինատներ—կայսե-  
րում և Նազիլիում (Իզմիրից զեպի արեւելք), կառուցված են  
շաքարի մի քանի գործարաններ, ցեմենտի գործարան և այլն:  
Ստամբուլում կա ամերիկական ավտոհավաքման գործարան,  
Մարմարա ծովի ափին—նավաշինարան: Ստեղծված է ածխի  
արդյունաբերություն, սողծովում է մետաղագործություն:  
Նոր արդյունաբերությունը ստեղծվում է կառավարության  
նախաձեռնությամբ և նշանակալից չափով պետական միջոցնե-  
րով:

Քաղաքները. Թյուրքիայի մայրաքաղաքը—Անկարան, ընկած  
է Փոքր Ասիայի կենտրոնական մասում, չոր տափաստանի  
մէջ: Անկարան մայրաքաղաքի վերածվելուց հետո շատ է աճել:

Ստամբուլ. (նախկինում Կոնստանտինուպոլիս, հնադարում—  
Բյուզանդիոն), Թյուրքիայի նախկին մայրաքաղաքը, նավա-  
հանգիստ՝ Բոսֆորի ափին: Թյուրքիայի ամենամեծ քաղաքը  
(740 հազար բնակչությամբ), արդյունաբերական կենտրոն,  
նավահանգիստ:

Իզմիր—(նախկին Չմյուռնիա)—տեքստիլ արդյունաբերու-  
թյան խոշոր կենտրոն և նավահանգիստ՝ Եգեյան ծովի ափին:

Կայսերի—քաղաք Փոքր Ասիայի կենտրոնական մասում,  
վորտեղ իՍՀՄ-ի ոգնությամբ կառուցվել է տեքստիլ կոմբի-  
նատ:

Ադանա— բամբակագործական շրջանի կենտրոն՝ Փոքր  
Ասիայի հարավում:

Չոնգուլդակ— Ածխի ավազանի կենտրոն՝ Սև ծովի ափին:  
(Թյուրքիայի քաղաքները տես՝ «Աշխարհագրության անալիզ  
մաս, եջ՝ 65, Բարտեգ 33):

## ԱՐԱԲԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ

ՍԱՌԻԳԻԱ (քաղաքություն): Տարածությունը՝ 1,6 միլ. ք. կմ, բնակչությունը՝ 4,5 միլ. մայրաքաղաքը՝ ՌԻԱԳ:

ՅԵՄԵՆ (քաղաքություն): Տարածությունը՝ 200 հազար քառ. կմ. բնակչությունը՝ 2-3 միլ. մայրաքաղաքը՝ ՍԱՆԱ:

ԲԻԻՏԱՆԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՐԱԲԱՅՈՒՄ: Տարածությունը՝ 475 հազար քառ. կմ. բնակչությունը՝ 730 հազար:

ՍԻՐԻԱ-(Փրանս. մանդ.) տարածությունը՝ 155 հազար քառ. կմ. բնակչությունը՝ 2,8 միլ. կենտրոնը ԲԵՐՈՒՏ:

ՊԱՂԵՍՏԻՆ. (անգլ. մանդ.) տարածությունը՝ 23 հազար քառ. կմ. բնակչությունը՝ 1,4 միլ. կենտրոնը ՅԵՐՈՒՍԱԼԵՄ:

ՏՐԱՆՍԻՐԻԱՆԻԱ-(անգլ. մանդ.) տարածությունը՝ 42 հազար քառ. կմ. բնակչությունը՝ 300 հազար, կենտրոնը ԱՄՄԱՆ:

ԻՐԱԲ (քաղաքություն անգլիայի հսկայության տակ), տարածությունը՝ 459 հազար քառ. կմ. բնակչությունը՝ 2,8 միլ. մայրաքաղաքը՝ ԲԱՂԻՍ:

ՍԱՌԻԳԻԱ, ՅԵՄԵՆ, (2,7 միլ. քառ. կմ.): Արաբիայի մակերևութը սա-  
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՐԱԲԱ րահարթ է: Նրա հարավային կեսը ընկած է արևա-

դարձային գոտում, իսկ հյուսիսայինը՝ միապաղաղ գոտու յենթաարեւադարձային գոնայում: Թերակղզու ներքին մասը իրենից ներկայացնում է անապատ լակ տեղ-տեղ ել կիսաանապատային չոր տափաստան: Անապատի մակերկրային մի քանի տեղերում հողի տակից աղբյուր է խփում: Աղբյուրի շուրջը սովո-



բաժար աճում և խոտի կանաչ դորզը, աճում են թփուտներ և արմավենիներ՝ Անապատում գտնվող բուսականության այդպիսի վայրերը կոչվում են օռգանքներ:

Արաբական թերակղզու բնակչությունը հաշվվում է մոտ 7—8 միլիոն մարդ: Արաբիայի բնակիչները արաբներ են: Նրանց մեծամասնությունը քոչվորներ—անասնապահներ են—(Բեդվիններ): Բեդվինական ցեղերը շրջում են ըստ կանոնի և անապատներում իրենց ուղտերով, ձիերով և գոշխարներով:

Մի ժամանակ (VII—VIII դարում, այսինքն, 1100—1200 տարի արաբացում) արաբները նվաճեցին Պաղեստինը, Սիրիան, Փոքր Ասիան, Իրաքը, Բաղդադը, ամբողջ Ելուսիսային Աֆրիկան՝ Սուեզից մինչև Զիպրաթար, և Յիվրոպայում, Պիրենեյան թերակղզին: Նրանց տիրապետությունն այդ յերկրներում տևեց 700—800 տարի: Արաբական կուլտուրան ու գիտությունը, զբաղակցությունը, արվեստը այն ժամանակ դրսևում են բարձր առաջնային վրա:

ՍԱՌԻԿԻԱ—ամսամամափակ (իմֆակալ) Մոնարխիա: Բեդվինական ցեղերին կառավարում են նրանց ավազները—շեխեր: Շեխերը պատկանում են ավելի հարուստ անասնապահների թվին: Նրանք յենթարկվում են քաղալորին, թեպետ հաճախ հնազանդությունից դուրս են գալիս: Ինքը, թագավորը գտնվում է Անգլիայի ազդեցության տակ: Մոտեղիայի մայրաքաղաքը—Ունադը բնկած է դադիսում: Թերակղզու կենտրոնում: Յերկու գլխավոր քաղաքները Մեկկոն և Մեդիման գտնվում են Կարմիր ծովի ափին:

ՅԵՄԵՆ, նույնպես ամսամամափակ մոնարխիա: Յեմենում է գտնվում Մոկկա քաղաքը, նա փառաբանվում է իր՝ աշխարհում ամենալավ սուրճով: Վորը արտահանվում է նրա նավահանգիստի միջոցով:

Հարավային Արաբիայում գտնվում է մի քանի վոչ մեծ իշխանություններ: Այդ իշխանությունները կառավարողները լրիվ կախման մեջ են Անգլիայից: Արաբիայի հարավ Արևմտյան ափերը հանդիսանում է Անգլիական գաղութ: Ազենը, Այսոսեդ, Բաբ-ել մանդիբի մեղուցի մոտ, գտնվում է Ադեն նավահանգիստը, նավերի համար վառելանյութի իր պահեստներով: Ադենը ամենից շատ աղմակահան նշանակություն ունի: Արաբիան նայեցեք քարտեզում—նկար 2 և 39:

ՍԻՐԻԱ, ՊԱՆԵՍՏԻՆ,  
ՏՐԱՆՍԻՐԻԱՆԻԱ,  
Ի Ր Ա Ք

Արաբիայից դեպի Ելուսիս Միջերկրական ծովի ափի յերկարությունը մոտավոր փոխած է Սիրիական սարահարթը: Նրա Ելուսիսային մասում գտնվում է Սիրիան, Հարավայինում՝ Պաղեստինը և Տրանսիրիան, վորոնք բաժանվում են իրարից վոչ մեծ Հորդանան գետով:

Սիրիական բարձրավանդակից ավելի արևելք բնկած է միջագետք՝ հարթավայրը, վորի վրա գտնվում է Իրաքը: Այստեղ հոսում են Տիգրիս և Ֆրատ գետերը, վորոնք ներքևի հոսանքի մոտ միախառնվում և թափվում են Պարսկական ծոցը:

Սիրիայի արևելյան մասը, ամբողջ Տրանսիրիան և իրաքի մեծ մասը, նույնպես և վորոշ տեղանքներում Պաղեստինում անապատ և կիսաանապատ է: Սիրիայի և Պաղեստինի մերձափնյա մասերում Միջերկրածովային կլիման է՝ կիզիչ ու չոր է ամառը, անձրևոտ ու տաք ձմեռը:

Հնապարհում Միջերկրական ծովի և Պաղեստինի միջև գոյություն ունե-

ցին ծագվում և պետություններ—Փյունիկիան—Սիրիայում, Իյուդեան—Պաղեստինում, Ասորեստանը Բաբելոնում—Իրաքում: Բաղմաթի պատերազմների հետևանքով այդ պետությունները կործանվեցին և ամբողջ յերկրը գնաց դեպի անկում:

Ներկայումս Սիրիայի, Պաղեստինի, Տրանսիրիանիայի և Իրաքի բնակչությունը կազմում է մոտ 7 միլիոն մարդ: Ազգությունը զբաղեցնում արաբներ են: Մինչև համաշխարհային պատերազմը այդ յերկրները մտնում էին Թյուրքիայի կազմի մեջ: Պատերազմի ժամանակ, վորպես արաբներին զբաղի իր կողմը, Անգլիան խոստացավ նրանց ինքնուրույնություն: Իրենց հաղթանակից հետո Անգլիան և Ֆրանսիան հայտարարեցին, վոր այնքան, վորքան այդ յերկրները Վալադանաշափի գաղափարով չեն, վորպեսզի չիքնուրույնացնեն գոյություն ունեցած, հարկավոր և ժամանակավորապես հանձնարարել նրանց «խնամակալներին»։ ավելի զարգացած յերկրներին: Սյուդանի «հանձնարարությունը» (մանդատ), վորը ձևականորեն տրվեց Ազգերի Լիգայի կողմից, Անգլիան ստացավ Իրաքը, Պաղեստինը, Տրանսիրիանիայի հետ միասին, Ֆրանսիան՝ Սիրիան: Ուստի այդ յերկրները սկսվեցին կոչվել «Մանտադային»: Սակայն «խնամակալները» իշխում են այնտեղ ինչպես իրենց տիրապետություններում: Արաբները հաճախակի ապստամբվեցին ժամանակակիցները—հարստահարողների դեմ, այդ ստիպեց վերջիններին գործադրել «ճկուն» քաղաքականություն,—1931 թվին անգլիացիները Իրաքը հայտարարեցին ինքնուրույն թագավորություն, բայց նախապես կնքեցին նրա հետ, «Միություն պայմանագիր», վորն Անգլիային իրավունք է տալիս հրահրել Իրաքի բարձրին քաղաքականության և տնտեսության վրա: 1936 թվին նույնը կրեառեց Ֆրանսիան Սիրիայի նկատմամբ: Այժմ Անգլիան պատրաստվում է կրկին այդ մանկության Պաղեստինի և Տրանսիրիանիայի նկատմամբ: Իր զբաղությունը Պաղեստինում ամբողջովին համար Անգլիան ուղտագործում է բուրժուա-նացիոնալիստական հոսանքը հրեաների մեջ—սիոնիզմը, վորը ծրագրում է օտեղծել հրեական պետություն: Պաղեստինում: Անգլիական և Ֆրանսիական իմպերիալիստների դժվարությունները Պաղեստինում և Սիրիայում ողտագործում են ֆաշիստական Իտալիան և Գերմանիան, այնտեղ պրոպագանդա մղելով Անգլիայի և Ֆրանսիայի դեմ և իրենց ցույց տալով իրեն արաբների «պաշտպաններ»:

Այդ յերկրների տնտեսությունը—հետամնաց է: Կիսաանապատներում և անապատներում, վորոնք զբաղեցնում են Իրաքի և Սիրիայի մեծ մասը և ամբողջ Տրանսիրիանիան, քոչում են, ինչպես և Արաբիայում, բեդվինական ցեղեր, վորոնք զբաղվում են անասնապահությամբ: Նստակյաց հողագործական բնակչությունը կենտրոնացված է Արևմտյան Սիրիայում և Պաղեստինում: Նույնպես և Տիգրիսի և Ֆրատի յերկարությունը: Իրաքում Արաք գյուղացիները մեծամասնությամբ ծանր պայմաններով վարձակալում են հողը կալվածատերերից: Պաղեստինում շատ կալվածատերեր ծախում էին իրենց հողը վերաբնակիչ հրեաներին, դուրս քշելով այդ հողերից վարձակալներին՝ արաբական գյուղացիներին: Անգլիական տիրապետությունն առաջացնում է արաբների ապստամբություն:



Սիրիայում և Պաղեստինում մշակում են ձիթապտուղները (օլիվալիշ), նարինջ, լիմոն, թուզ, խաղող և հացահատիկային կուլտուրաները։ Սիրիայում դարդացած և նաև բամբակադործությունը և շերամապահությունը։

Իրաքում արհեստական վոլոդման ոգնությունը մշակում են հացահատիկային կուլտուրաներ, Տիգրիսի և Եփրատի ափերին՝ փունիկյան արմավենիներ։

Այդ յերկրները արդյունաբերությունը թույլ և զարգացած։ Հյուսիսային Իրաքում, Մուսուլա լեռների շրջանում, հանվում և նավթ, վորը խողովակներով մեքսիկո մղվում և պաղեստինյան նավահանգիստ Պայֆան և Սիրիական նավահանգիստ՝ Երկուլին։ Նավթի հանույթը կենտրոնացված և անդլիական կապիտալի ձեռքում՝ ամերիկացիների և ֆրանսիացիների մասնակցությամբ։

Սիրիայում գլխավոր քաղաքներն են՝ Բեյրութը—նավահանգիստ և վարչական կենտրոն և Դամասկոսը—հին քաղաքը։

Պաղեստինում—Ցերուսաղիմը—վարչական կենտրոն, հին քաղաք։ Պայֆա—առևտրա-արդյունաբերական կենտրոն, նավահանգիստ և անդլիական ռազմա-ծովային բազա, Յաֆֆա—նավահանգիստ։

Իրաքում—Բաղդատ՝ մայրաքաղաքը՝ և Մուսուլ՝ նավթային շրջանի կենտրոն։

Սիրիայի և Պաղեստինի համար տես «Աշխարհագրություն» առաջին մասի 65, Իրաքի համար, 2-րդ մաս, 69 (2 և 39)։

## ԻՐԱՆ (ՊԱՐՍՎԱՍՏԱՆ)

Տարածությունը՝— 1,6 միլ. քառ. կմ., բնակչությունը՝ 15 միլ. : Մարաֆապը— Թեհրան։

Իրանը ընկած է նույնանուն բարձրավանդակի վրա—միջադեպի հարթավայրից դեպի արևելք։ Հյուսիսից նա սահմանակից է խՍՀՄ-ի հետ։

Խորհրդային—Իրանական սահմանը ընդհատվում է Կասպից ծովով, վորի հարավային ափը պատկանում է Իրանին։ Հարավում Իրանը վորդովում է Հնդկական օվկիանոսի Պարսկական ծոցով։

Իրանական սարահարթը յեզրապատված է լեռներով։ Հյուսիս—Արևելքում, Կովկասից դեպի հարավ, գտնվում է Հայկական բարձրավանդակը Հյուսիսում, Կասպից ծովի ափին զուգընթաց, բարձրանում է ԵԼԲՈՒՐՈՒՍ լեռնաշղթան։ Բարձր լեռներ են ձգվում և արևմուտքում։ Իրանական սարահարթում չոր ու ցամաքային է կլիման, Իրանի մեծ մասը անապատ է և կիսաանապատային տափաստան։ Տափաստանում չրջում են քոչվոր անասնապահները։ Ուղղանկյուն ապրում է նստակյաց բնակչությունը։

Հյուսիս—Արևմուտքում, Հայկական բարձրավանդակի վրա, կլիմայական պայմանները ավելի բարենպաստ են, քան Իրանական սարահարթի վրա։

Խիստ կերպով տարբերվում է ամբողջ յերկրից Կասպից ծովի և Ելբուրուս լեռնաշղթայի միջև ընկած նեղ հարթավայրային շերտը։ Այստեղ կլիման տաք է ու խոնավ։ Ելբուրուսի հյուսիսային լանջերը ծածկված են անտառով և խոտով, այն ժամանակ, յերբ այլ լեռներ անկյանք ու մոխրագույն են։

Կասպիական նեղ ափը—միակ չրջանն է Իրանի, վորտեղ հողագործությունը հնարավոր է առանց արհեստական վոռագման։ Այդ ափը տեղ-տեղ պատած է ճահճներով, և հանդիսանում է մալբերայի չրջան։ Չնայած դրան այստեղ կենտրոնացված է ամբողջ յերկրի բնակչության կեսից ավելին։

Իրանն ունի հանածոների նշանակալից հարստություններ—նավթ՝ հարավ—արևմուտքում և Հյուսիսում, քարածուխ, պղինձ և այլն. Իրանի ընդերքը վատ է ուսումնասիրված։

Իրանի բնակչությունը համեմատաբար փոքրաթիվ է։ Բնակչության կեսից քիչ ավելին կաղմում են պարսիկները։ Հյուսիսում ապրում են նույնպես թյուրքեր, արևմուտքում՝ քրդեր։

Իրանը—մոնարխիա յե։ Նրա մոնարխը Շահի տիտղոս է կրում։ Կա և պարլամենտ (Մեջլիս), վորը մեծ դեր չի խաղում։ Անդլիան Իրանում տնտեսական կարևոր դիրքեր ունի։ Վերջին ժամանակները ֆաշիստական Գերմանիան ձգտում է ուժեղացնել իր ազդեցությունը Իրանում։

Իրանում գլխավոր դեր է խաղում գյուղատնտեսությունը։ Նա չատ հետամնաց է։ Համարյա ամբողջ հողը պատկանում է կաղվածատերերին, հողեկորականությունը և պետությունը։ Գյուղացիները վարձակաղում են փոքրիկ հողակտորներ, վճարելով բերքի յերկու յերրորդը կաղաղավարձ, բացի դրանից, վճարում են ջրից, սերմերից և անասուններից ողտվելու համար։

Մշակման տեխնիկան ցածր է։ Գլխավոր կուլտուրաներն են—բամբակ, խաչիսաչ, ծխախոտ, բրինձ, մրգեր, հատկապես դեղձ և ծիրան։ Հողագործությունը կենտրոնացված է Հյուսիսում, Հյուսիս—արևմուտքում և Իրանական սարահարթի



ապրիստներում: Ամենուրեք զարգացած և անասնապահությունը, առանձնապես քոչվորային վոչխարաբուծությունը:

Արդյունաբերությունը թույլ և զարգացած, բացի նավթի հանույթից, վորը զտնվում է անդլիացիների ձեռքում:

Կառավարության նախաձեռնությամբ և մասնակցությամբ ստեղծվում է նոր արդյունաբերություն: Արդեն կառուցվել են շաքարի գործարան, մահուղի և այլ Փաբլիկաներ: Շատ են արհեստանոցային ձեռնարկությունները. գլխավորապես տեքստիլ և գորգագործայինը: Իրանական գորգերը շատ բարձր են զնահատվույ արտասահմանում:

Իրանը աշխուժ առևտուր է անում Խորհրդային Միության հետ:

Իրանի քաղաքները. Թեհրան—մայրաքաղաքը, Թավրիզ—կարևոր առևտրական կենտրոն, Փեխլեվի—նավահանգիստ Կասպից ծովի վրա, Մեշխեդ—հյուսիս-արևելքում, Իսպահան—հարավում: (Տես. քարտեզ 9):

1938 թվին ավարտվեց Տրանսիրանյան յերկաթուղու կառուցումը 1600 կմ. յերկարությամբ, վորը միացնում է Կասպից ծովի և Պարսկական ծոցի ափերը:

## ԱՂՎԱՆՍՏԱՆ

Տարածությունը՝ 650 հազար քառ. կմ., բնակչությունը՝ մոտ 7 միլիոն, մայրաքաղաքը—ԲԱՆՈՒԼ:

Աղվանստանը ընկած է Թուրքմենական, Ուզբեկական և Տաջիկական Միութենական Խորհրդային Հանրապետություններից զեպի հարավ:

Աղվանստանը լեռնային յերկիր է՝ շատ նոսր ազգաբնակչությամբ: Նրա արևմտյան մասը Իրանական սարահարթի շարունակությունն է: Արևելյան մասում անցնում են Հինդուկուշ բարձր լեռները, իսկ հյուսիսում— Պամիրի բարձր լեռները: Կլիման, ինչպես և Իրանում, չոր ու ցամաքային է: (Տես քարտ. նկ. 2 և 3):

Աղվանցիները կազմում են ամբողջ բնակչության կեսից քիչ ավելին: Մնացած ժողովուրդներից ավելի բազմաթիվը տաջիկներն ու ուզբեկներն են: Աղվանական առածին ցեղերն

ունեն իրենց ավազը: Յերկրի գլուխը կանգնած է անասնաբանափակ Մոնարխը—Փաղիչահը: Մեծ ազդեցություն ունի Անգլիան:

Բնակչության մեկ յերրորդը—քոչվորներ են, վորոնք անասուններ են պահույ և հատկապես կարակուլ վոչխարներ: Մըշտական բնակչությունը կենտրոնացված է հյուսիսում և զետերի հովիտներում, վորտեղ անասնապահությունից բացի, զբաղվում են հողագործությամբ (ցորեն, գարի, բրինձ, բամբակ, խաչ-խաչ, մրգեր):

Արդյունաբերությունը սաղմային զրույթյան մեջ է: Հանածոների հարստություններն չեն ուսումնասիրված և համարյա թե չեն մշակվում:

Աղվանստանում յերկաթուղիներ չկան: Բեռների և մարդկանց տեղափոխումը կատարվույ է քարավաններով և ավտոմեքենաներով:

Քաղաքները—Բաքուլ—մայրաքաղաքը, գտնվում է արևելքում՝ Հինդիկուշյան լեռների հովտում, և Գերատ—արևմուտքում, Իրանական սարահարթի վրա: (Տես. նկար 3):

1. Ինչպիսի՞ ծովեր, ծոցեր և նեղուցներ են ՍՏՈՒԳԻԶ շԱՐՅԵՐ վոգոգում Թյուրքիային, Սիրային, Արաբիային և Իրանին:

2. Ինչո՞ւմն է կայնում Թյուրքիայի և Իրանի կլիմաների նմանությունը:

3. Ի՞նչ են մանդատային յերկրները:

4. Համեմատեցեք Թյուրքիայի, Իրանի և Աղվանստանի տնտեսությունները:

5. Թյուրքիայի և Իրանի վո՞ր մասերում է զարգացած գյուղատնտեսությունը:

6. Ձեր ուսումնասիրած Ասիայի յերկրներից, վորոնք են հարուստ նավթով, և ում են պատկանում նավթահորերը այդ յերկրներում:

7. Թվեցեք Թյուրքիայի, Իրանի, Աղվանստանի, Սիրիայի, Պաղեստինի, Իրաքի մայրաքաղաքները և կարևորագույն քաղաքները:



## ՀՆԴԿԱՍՏԱՆ

Տարածությունը՝ 4 միլ. ք. կմ., բնակչությունը՝ 338 միլիոն, վարչական կենտրոնը՝ Դեհլի:

Հնդկաստանը ազդարձակալության թվի տեսակետից աշխարհում յերկրորդ (Չինաստանից հետո) յերկրն է, և Մեծ Բրիտանիայի դա-

դույթներից ամենակարևորը:


Նա զբաղեցնում է— 1) Հնդկաստանի քերակղզին՝ Դեհլանի սարահարթի հետ միասին ներս ցցված յեռանկյունով մտնում է Հնդկական ովկիանոսը: 2) Հնդկական (կամ Հնդկա-դանդեսյան) հարթավայրը, վարը հյուսիսից կանում է քերակղզուն և 3) Հիմալայան լեռնային սիստեմի լեռնաշղթայի մի մասը: (տես նկար 1—2 և 3):

Հիմալայները ձգվում են մի քանի շղթաներով, ունենալով 2,400 կմ. յերկարություն՝ Նրանցում հաշվվում է մոտ 40 դաճաթ, վորոնք հասնում են 7 կմ. բարձրության՝ ծովի մակերևույթից: Այդ դաճաթներից մի քանիսը անցնում են 8 կմ.-ից՝ Նրանց թվում է յերկրագնդի ամենաբարձր դաճաթ Եվերեստը (8,880 մետր) Հիմալայների վերևի մասը (4,5—5 կմ. բարձր) ծածկված է հավերժական ձյունով և սառույցով: Հիմալայի հարավային լեռները պատկանում են Հնդկաստանին, իսկ հյուսիսայինները—Չինաստանին (Տիբեթին):

Հիմալայան լեռների ձուլներից սկիզբ են առնում մի շարք գետեր, վորոնք հոսում են Հնդկական հարթավայրով: Նրանցից խոշորագույններն են,—Գանգեսը և Բրահմապուտրան՝ արևելքում, Ինդոսը՝ Արևմուտքում:

Հնդկաստանն ունի արևադարձային կլիմա: Տեղումները Հնդկաստանում կախված են մուսսոններից—բամիններ, վորոնք ամառային կես տարում միջում են ովկիանոսից դեպի ցամաք, իսկ ձմեռային կես տարում—ցամաքից դեպի ովկիանոս: Ամառային մուսսոնները բերում են անձրևվներ, առանձնապես ավելի ուժեղ (2 մետր) Հնդկական հարթավայրի արևելյան մասում: Հիմալայան լեռների լանջի վրա կա տեղ, ուր տեղումներն ավելի շատ են—մինչև 12 մետր՝ մեկ տարում: Ամառային Մուսսոնային զգալի անձրևներ են տեղում նաև Հնդկաստանի թերակղզու ափերին: Այդ տեղումներով հարուստ չրջաններում հանդիպում են արևադարձային փարթամ անտառների և բամ-

բուկի: Այստեղ ապրում են փղեր, ռենդեղջուրներ, վագրեր, կապիկներ: Այդ չրջաններում մշակում են բրինձ, ջուտ, թեյ:



Նկար 3. Հնդկաստանի, Հնդկաչինի և Ինդոնեզիայի ֆաղափական փարտեզը

Հնդկական հարթավայրի միջին և հատկապես արևմտյան մասում քիչ են տեղումները: Հողագործությունը այստեղ տարվում է գլխավորապես արհեստական վոռոգմամբ՝ Գանգես և Ինդոս գետերից: Ցանվում են ցորեն, չաքարեղեգ և բամբակ: Ինդոսի ներքին հոսանքից դեպի արևելք ընկած է Տարրավագաու կիսաամապատը:

Դեհլանի սարահարթը նույնպես ունի չոր կլիմա: Ամառային մուսսոնների ժամանակ անձրևներ են դալիս յերբեմն վոչ բավականաչափ քանակությամբ, յերբեմն չափազանց չուտ են կտրվում, կամ ուշ են սկսվում: Բարձրավանդակի մեծ մասը սափանա կամ արևադարձային անտառատափաստան է, վորտեղ տափաստանային տարածությունները մեջ ընդ մեջ փոխվում են կարճ ծառերի և մացառուտների: Տեղ-տեղ հանդիպում են արևավադարձային անտառներ—սակաճալում աճեցնում են անասուններ:





Այնքան, վորքան տարվա չոր ժամանակ խոտը ալբում է, անասունները խիստ նիհարում են, յերբեմն ել կորստի մատնւմ։ Սարահարթի վրա ցանում են ցորեն, գարի, և կորեկ։

Հնդկական թերակղզու վրա կան քարածխի, յերկաթի, մարգանցի, վոսկու, ալմասի, և այլ հանածոների հանքեր։

Հնդկաստանի հսկայական բնակչութունը (338 ԲՆԱԿՍՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ միլիոն) ունի ազգային խառնաբոս կազմ։ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ Բնակչության մեծամասնութիւնը կազմում են

հնդիկները։ Հարավում ապրում են Դրավիդները (60 միլիոն), Հնդկաստանի բնակչութիւնը հին և՛ ունի վաղվի մուգ գույն։ Հնդկաստանի տարբեր վայրերում՝ խոսու՞ են 200 տարբեր լեզուներով ու բառապաշարով։

Հնդկական բնակչութիւնը բաժանվում է ինքնանվուր կաստերի—գասերի (Գուրմեր, Ռագմիկներ, առևտրականներ, գյուղացիներ, արհեստավորներ)։ Վոսե մի գասին չպատկանող մարդիկ համարվում են մերժվածներ և յենթարկվում են ստորացումների։

Ազգաբնակչության մեծ մասը գյուղացիներ են, վորոնք վարձակալում են վոչ մեծ հողակտորներ՝ կալվածատերերից կամ կառավարութիւնից։ Գյուղացիութիւնը Հնդկաստանում քաղաքային և տալիս իր խղճուկ գոյութիւնը։ Հնդկաստանում շատ քարձր և մահացութիւնը։ Հնդկական գյուղացիութիւնը համարյա թե ամբողջապես անգրագետ է։

Հնդկաստանի գյուղացիութիւնը կրում է կրկնակի ճնշում։ առաջինը՝ անգլիական կապիտալիստների կողմից և յերկրորդը՝ Հնդկական իշխանների, կալվածատերերի և առևտրականների կողմից։

Հնդկաստանը հանդիսանում է անգլիական գաղութ։ Նրան կառավարում են Գեներալ—նահանգապետը, կամ փոխարքան, վորը նշանակվում է Լոնդոնից՝ 4 տարի ժամանակով։ Յերկիրը բաժանված է նահանգների, վորը գրավում է տերիտորիայի յերկու յերրորդը, և իշխանութիւնների, վորոնք բռնում են տերիտորիայի մնացած մեկ յերրորդը։ Նահանգները կառավարում են անգլիական նահանգապետները, վորոնք նշանակվում են փոխարքայի կողմից, իսկ իշխանութիւնները—Հնդկական իշխան-

ները—րադիկները և մագարադիկները (վորոնց մոտ հսկողութիւն համար, գտնվում են փոխարքայի ներկայացուցիչները)։

Հնդկաստանում ծավալվեց ուժեղ հեղափոխական շարժում տարբեր և ներքին հարստահարողների դեմ։ Վախենալով այդ շարժումից հնդկական բուրժուազիան և կալվածատերերը չտապեցին խոսք մեկ անել Անգլիացիների հետ։ 1937 թվից ազգային-ազատագրական շարժման ճնշման ներքո անգլիացիները ստեղծեցին Հնդկաստանում պառլամենտի նման մի բան, վորտեղ ընտրվելու իրավունքից ուղտվում է ընդամենը բանկչության մեկ տասներորդը, բայց և այդ որպանն ունի միայն խորհրդակցական ձայն։

Բրիտանական տիրապետութիւնը հետ և պահում Հնդկաստանի տնտեսական և կուլտուրական զարգացումը։

Բարձր հարկերով անգլիացիները սաստակցելով են ժողովրդական մասսաների ազդատիկ վիճակը— Հնդկաստանում։ Երկրորդակերպ հնդկական իշխաններին և կալվածատերերին, նրանք պահպանում են բազմամիլիոն հնդիկ աշխատավորների իրավազրկութիւնը, վերջապես անգլիացիները համարյա առանց մաքսի իրենց ապրանքները արտահանում են Հնդկաստան և դրանով արգելակում հնդկական արդյունաբերութիւնի զարգացումը։

Հնդկաստանի եկոնոմիկայում գլխավոր դեր է խաղում գյուղատնտեսութիւնը, այն կատարվում է մեծամասամբ գյուղացիների միջոցով, մասամբ ել պլանտատորների կողմից։ Գյուղական տնտեսութիւնների մասին մենք ասացինք։ Նրանց ողտագործմանը հասնում է վոչ մեծ հողակտոր, այն ել վարձակալած։ Մշակման տեխնիկան ծայրաստիճան պրիմիտիվ է։ Բերքատվութիւնը շատ ցածր է, հաճախակի յեն անբերրիութիւնն ու քաղցը։ Պլանտատորները—կապիտալիստները դաժանորեն չահագործում են վարձու բանվորներին։

Հնդկաստանի գլխավոր կուլտուրաներն են (բրինձ, ցորեն, կորեկ, բամբակ, ջուտ, թեյ, չաքարեղեգ)։ Տարածված է նաև ուլյումի—խաշիաչը, քունջութը, (յուղային բույս), կաուչուկատուն։ Չարգացած է անասնաբուծութիւնը (յեղներ, գերուներ, գոմեշներ, այծեր, վոչխարներ), և շերամապահութիւնը։

Հնդկաստանի արդյունաբերութիւնը, յեթե հաշվի առնենք նրա հսկայական բնակչութիւնը, թույլ և զարգացած։ Կան



չատ բամբակեղենի և ջուտի ֆաբրիկաներ, բամբակաղտիչ, բրնձաղտիչ, թեյի վերամշակման ձեռնարկություններ: Մետաղագործությունը, չնայած յերկաթի և քարածխի պաշարի առկայությանը, թույլ է զարգացած: Մեքենաշինությունն ավելի թույլ է զարգացած, կան մի քանի չողեքարչերի և վաղոնափերանորոգման գործարաններ, (նավաշինարան, ուղղակիան ձեռնարկություններ): Ավելի զարգացած է մարգանեցի հանույթը, վորը անհրաժեշտ է անդլիական մետաղագործությանը, վոսկու և արմատի հանույթը: Հնդկաստանում դեռ գոյություն ունի քայքայված տնայնագործական արդյունաբերություն—մետաքսի, բրդի և այլն:

Հնդկաստանի խոշորագույն քաղաքն է Կալկաթան (1,5 միլ. բնակիչներ), վորը գտնվում է Հնդկական հարթավայրի արեւելքում, Բենգալյան ծոցի մոտ, նավահանգիստ և ջուտի ագլոմերացիայի կենտրոն: Բոմբեյ (1,2 միլ. բնակիչներ) գտնվում է Հնդկաստանի արեւմուտքում (փոքրիկ կղզու վրա), բամբակեղենի արդյունաբերության գլխավոր կենտրոն և բամբակի արտահանման համար նավահանգիստ: Մադրաս, գտնվում է Հնդկաստանի արեւելյան ափում, տեքստիլ արդյունաբերության կենտրոն և նավահանգիստ: Դելի—Հյուսիսային Հնդկաստանում, վարչական կենտրոն: Ջամշեդպուր—Կալկաթայից դեպի արեւմուտք, Հնդկական մետաղագործության կենտրոն: (Քաղաքները նայեցեք քարտեղի վրա—նկար 3):

## ՀՆԴԱՍԻՆԻ ՅԵՎ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՅԵՐԿԻՐՆԵՐԸ

Բիրմա—(Բրիտանական գաղութ): Տարածությունը՝ 605 հազար ք. կմ: Բնակչությունը՝ 14 միլիոն, Կեներոնը—Ռանգուն:

Միամ (Թագավորություն), տարածությունը՝ 519 հազ. քառ. կմ, բնակչությունը՝ 13 միլ., մայրաքաղաքը՝ Բանգկոկ:

Փրանսիական Հնդկասիան (Փրանսիական գաղութ): Տարածությունը՝ 684 հազ. ք. կմ, բնակչությունը՝ 21,6 միլ., կենտրոնը—Խամբու:

Մալայա (Մալայական պետություններ), Նեդուցի մոտ գտնվող տիրապետությունները և Հյուսիսային Բորնեոն (բրիտանական գաղութներ): Տարածությունը՝ 352 հազար քառ. կմ: Բնակչությունը 5 միլ:

Հոլլանդական Հնդկաստան, կամ Ինդոնեզիա, (Հոլլանդական գաղութ): Տարածությունը՝ 1,9 միլ. քառ. կմ, բնակչությունը՝ 61 միլ., կենտրոնը—Բատավա:

Ֆիլիպիններ (Ամերիկայի Միացյալ Նահանգների գաղութ): Տարածությունը՝ 296 հազար քառ. կմ, բնակչությունը՝ 13 միլ., կենտրոնը—Մանիլա:

Հնդկասիան—Թերակղզի Ասիայի հարավ-արեւելքում, Հնդկական և խաղաղ

ովկիանոսների միջև: Հնդկասիան հարավային մասը ուժեղ կերպով ձգված է և ստեղծվում է Մալակա քերակղզին Հնդկասիան հարավ և արեւելք յեղած բազմաթիվ կղզիները կոչվում են Ինդոնեզիա—(այսինքն կղզիների Հնդկաստան, կամ Մալայան արշալիպ): Նրանք ընկած են մասամբ հնդկական, մասամբ խաղաղ ովկիանոսում: Ինդոնեզիայի մեջ աչքի յեն ընկնում՝ Մեծ Զանդակա կղզիները (Սումատրա, Բորնեո, Յավա և Յեյայես), Փոքր Զանդակա և Ֆիլիպինյան կղզիները: Սումատրա և Մալակա թերակղզու միջև ընկած է Մալակայի նեղուցը, վորը միացնում է Հնդկական և խաղաղ ովկիանոսները:

Հյուսիսից հարավ ուղղությամբ Հնդկասիան հատվում է մի շարք լեռնաշղթաներով, վորոնք բաժանված են իրարից հովիտների նման: Լեռնաշղթաների միջև—խոր գետային հովիտներ են, վորոնք դեպի հարավ գալով լայնանում են: Ինդոնեզիայի կղզիները տեղ-տեղ նույնպես լեռնոտ են:

Հնդկասիան և Ինդոնեզիան ամբողջական ընկած են արեւադարձային գոտում: Մեծ և Փոքր Զոնդյան կղզիներում անձրևները տեղում են ամբողջ տաքին հսկայական քանակությամբ (2-ից 5 մետր): Հնդկասիան և Ֆիլիպինյան կղզիներում մուսսոնային փամփեռի շնորհիվ անձրևները տեղում են գերազանցապես ամռանը:

Հնդկասիան և Ինդոնեզիան պատած են արեւադարձային անտառներով և բամպակի թփերով: Կան շատ արեստականորեն տնկած կաուչուկատու ծառերի, շաքարեղեգի, սուրճի ծառեր, կոկոսային արմավենու և այլ թանգարծիք բույսերի պլանտացիաներ:

Հանածոները հարստությունները շատ նշանակալից են: Մալակայում Ինդոնեզիայի մի քանի կղզիներում ընկած են անագի մեծ պաշարներ, Հնդկասիան (Բիրմայում) Մեծ Զոնդյան և Ֆիլիպինյան կղզիներում կա նավթ, Հնդկասիան և Ինդոնեզիայի մի քանի կղզիներում—քարածուխ, յերկաթ ցինկ:

Սյու բուր յերկրների ազդաբնակչությունը՝ ամբողջությամբ կազմում է 128 միլ. (բնդհանուր տարածությունը 4,2 միլ. քառ. կմ.) Սյու յերկրների ազդային կազմը բազմաբղետ է, ավելի բազմաթիվը Մալայացիք են, վորոնք բնակվում են Ինդոնեզիայում և Մալակայում: Հնդկաստանում ապրում են նրանց ազգակից ժողովուրդներ—աննամիտներ, սիամցիներ, և բիրմանցիներ: Ցեղերից մի քանիսը կուլտուրական զարգացման ցածր մակարդակի վրա յեն գտնվում:

Հնդկասիան և Ինդոնեզիան զաղութներ են. Հնդկասիան արեւելյան մասը, Ֆրանսիական Հնդկասիան—պատկանում է Ֆրանսիային. Հնդկասիան արեւմուտյան մասը—Բիրման նույնպես և Մալակական ու Բորնեոյի հյուսիսային մասը—պատկանում են Անգլիային, Ինդոնեզիայի մեծ մասը—Հոլանդիային, Ֆիլիպինյան կղզիները Ամերիկայի Միացյալ Նահանգներին: Միակ յերկրը այստեղ վորը պահել և ձևական ինքնուրույնություն, հանդիսանում է Սիամի թագավորությունը (Հնդկասիան կենտրոնում), սակայն փաստորեն և նա կախված է Անգլիայից, Ֆրանսիայից, մասամբ ել ձապոնիայից:

Հնդկասիան և Ինդոնեզիան ունեն ավելի եետամնաց տնտեսություն քան Հնդկաստանը: Դործարանային արդյունաբերություն համարյա թե չկա այստեղ: Զարգացած է անագի հանույթը (այստեղ ստացվում է անագի համաշխարհային հանույթի 60%-ը): Նավթի և այլ հանույթների: Ամբողջ հանույթը արտահանվում է արտադրանքի:



Գյուղատնտեսության մեջ ղլխավոր դերն է խաղում կառուցուկը (այստեղ կենտրոնացված է կառուցուկի համաշխարհային հանույթի 90 %-ը), շաքարեղեգ, բրինձ, կոկոսովյան արմավենի, պտուղները, վորեղ հանում են թանգարժեք արմավենու յուղ, և նույնպես սուրճը, թեյը, ծխախոտը Այդ կուլտուրաները ուղարկվում են արտասահման:

Տնտեսությունը տարվում է կամ գյուղացիների միջոցով, վորքը հողա-կտորները վրա (մեծամասամբ վարձակալած), կամ կալվածատերերի—Ֆեոդալների, կամ արտասահմանյան կապիտալիստները—պլանտատորների միջոցով՝ վարձու բանվորները (կուլի) ոգնությունը:

Գյուղացիները վճարում են կալվածատերերին վարձաւալած հողի բերքի համար վոչ պակաս կեսը:

Մնացած մասից նրանք վճարում են 1/3-ը՝ տուրքի ձևով պետությունը: Պլանտացիաներում բանվորների աշխատանքի պայմանները շատ ծանր են, աշխատում 17-18 ժամ, կիզիչ արեւի կամ հորդ անձրեւի տակ: Աշխատավարձը չնչին է, աննշան դանցանքի համար գործադրվում է մաքնական պատիժը: Վարձվողը պայմանագրում նշված ժամկետից շուտ (2-ից մինչև 5 տարի) չի կարող հեռանալ այդ գոտիքից: Պլանտացիաների բանվորների թվում շատ չինացիներ կան, վորոնք հավաքագրվել են իրենց հայրենիքում՝ պլանտատորների գործակալների միջոցով: Վերջին տասնամյակում Վնդկաչինի և Ինդոնեզիայի գյուղացիների և բանվորների մեջ աճում է հեղափոխական շարժումը:

Հնդկաչինի և Իդոնեզիայի քաղաքներից հարկավոր է նշել Սինգաբուրքը՝ նույնպես վորքերի կղզու վրա Մալակայի հարավային ծայրում: Սինգաբուրքը կարևոր նավահանգիստ է, և անգլիական ուժեղ ռազմա-ծովային բազա Արևելքում:

ՍՏՈՒԳԻՁ ՉԱՐՅԵՐ

ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Ինչպիսի յերկու թերակղզիներ և ինչպիսի կղզիներ են գտնվում Ասիայի հարավում և հարավ— արևելքում: Ինչպիսի գաղութներ և

ինչ կիսադաղուլթ է ընկած նրանց վրա:

2. Ինչ տարբերություն կա Դեկանի սարահարթի և Հնդկա-կան հարթավայրի կլիմայի միջև:

3. Պատմեցեք Հնդկաստանի տնտեսության մասին և Հնդկա-կան գյուղացիների դրությունը մասին:

4. Ինդոնեզիայի և Հնդկաչինի պլանտացիաներում ինչպիսի կուլտուրաներ կան և ինչպիսի պայմաններում են գտնվում պլանտացիաների բանվորները:

5. Յույց տվեք Հնդկաստանի վարկուրագույն քաղաքները և անգլիական ռազմածովային բազան՝ Մալակկայի մոտ:

## Զ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Տարածությունը՝ 10,8 միլ. քառ. կմ.: Բնակչությունը՝ մոտ 470 միլ.: Մայրաքաղաքը— Նանկին:

Չինաստանը բռնում է Արևելյան և Կենտրոնական Ասիայի մեծ մասը: Այդ տերիտորիան, վոր հավասար է ամբողջ Յեվրոպայի տարածությանը, կազմված է Արևելյան Չինաստանից, Մանջուրիայից, Նեբիին Մոնղոլիայից, Սինցզյանից և Տիբետից:

## ԱՐԵՎԵԼՅԱՆ ՉԻՆԱՍՏԱՆ



Նկար 4. Չինաստանի աշխարհագրական դիրքը, աշխարհի բարեկի վրա տեղի գույց է տրված Չինաստանը:

ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ Արևելյան Չինաստանը վորվողվում է խաղաղ օվկիանոսի Դեղին, Արևելա—Չինական, Հարավ—Չինական ծովերով: Արևելյան Չինաստանի մեծ

մասը ծածկված է Չինական լեռներով: Հյուսիս—Արևելքում տա-րածվում է Արևելա— Չինական հարթավայրը:

Չինական լեռներում իրենց սկիզբն են առնում յերկու մեծ գետեր՝ Հուանգ-Հոն (կամ Դեղին) և Յանցզի—ցզյանը (կամ Յանցզի): Յանցզի-ցզյանը աշխարհի խոշոր գետերից մեկն է և կարևոր ջրային ուղի է: Մովային մեծ նավերը նրա ընթացքով բարձրանում են հեռու, դեպի վեր: Հուանգ-Հոն



Թափվում է Դեղին ծովը, Յանցզի-ցզանը—Արևելա-Չինական ծովը: Արևելյան Չինաստանի յերրորդ գետը, վորը բախականա- չափ կարճ է, Սիցզյանն է, վորը Թափվում է Հարավ— Չինական ծովը:

Այդ գետերի ավազներին համապատասխան, Արևելյան Չինաստանը բաժանվում է յերեք շրջանների: Հյուսիսային Չինաստան— Հուանգ— Հոնի ավազանում, այստեղ գլխավոր քա- ղաքն է Բեյպինը), Միջին, կամ Կենտրոնական Չինաստան, Յանցզի— ցզյան գետի ավազանում (կարելիորագույն քաղաքը— Շանհայ, այստեղ է գտնվում ամբողջ Չինաստանի մայրաքաղա- քը— Նանկինը), և Հարավային Չինաստան— Սինցզյանի ավազա- նում (գլխավոր քաղաքն է Կանտոնը): (տես. նկ. 2 և 5):

Հյուսիսային—Չինաստանը տեղ-տեղ ունի շատ բերրի հող—Լյոռո կամ Դեղնահող: Դեղնահողի վերին շերտը չոր յերանակին բարձրանում է փոքու ափեր, վորոնք գեղին բոլոր պատում են շոջապատը: Անձրեփների ժամանակ նա վեր է ածվում լայծուն, գեղին ցխի: Շուանցնո գետի ջրերը, վորոնք ան- ցնում են այդ հողի շերտերով, գունավորված են գեղին գույնով, վորով նա ներկում է և ծովը՝ իր գետաբերանի մոտ: Այստեղից ել Դեղին գետ և Դեղին ծով անունները:

Չրհեղեղները հեղտոթյամբ վորողում են դեղնահողը, առաջացնելով նրանում ձորեր և կիրճեր: Այդ ձորերն ու կիրճերը ոգտաբերվում եր վորպես յերթեկեկոթյան ճանապարհներ: Նրանց մեջ աղքատ բնակիչները բնակություն համար այրեր են փորում:

Արևելյան Չինաստանը մեծ մասով ընկած է բարեխառն գո- տու մեջ արևադարձային շերտում, իսկ նրա հարավային ծայրը խորը, մտնում է արևադարձային գոտու մեջ: Արևելյան Չինաս- տանի կլիմայի համար բնորոշ է մուսսոնային քամիների լողե- ցությունը: Ամառային մուսսոնները բերում են ուժեղ անձրևներ, իսկ ձմեռայինները՝ չորություն և ցուրտ: Գետերի հեղեղում- ները, վորոնք այստեղ հաճախակի տարերային աղետի բնույթ են կրում, առաջանում են մուսսոնային անձրևների հետևանքով՝ ամառվա վերջին կամ աշնանը:


Արևելյան Չինաստանի կլիման և հողը բարենպաստ են ցորե- նի, բրնձի, բամբակի, թեյի աճեցման համար: Յերբեմն, յերբ ամառային մուսսոնը ուշանում է կամ չուտ է վերջանում, սկըս- վում է յերաչար:

Արևելյան Չինաստանի հանածոների հարստությունները ար- տավարդ կերպով շատ են: Նրանք քիչ են հետազոտված, սակայն արդեն հայտնի յեն Գարաժիի հսկայական պաշարները՝ Հյուսի- սային Չինաստանում, յերկաթահանքի պաշարները՝ Միջին, գու-

Պայուր մետաղների— ցինկ, անագ և այլ հազվագյուտ մետաղ- ների— վոլֆրամ, սուրմա և այլն— Հարավային Չինաստանում:

Չինաստանն ունի հսկայական բնակչություն— մոտ 470 միլ.: (Այս թիվը մոտավոր է, վո- ռովհետև Չինաստանում մարդահամար չի յե- ղել): Այդ թվից 430 միլ. ապրում է Արևելյան Չինաստանում: Առանձնապես խիտ է բնակչությունը գլխավոր գետերի հովիտ- ներում և ծովափերին:

Արևելյան Չինաստանի բնակիչները Չինացիներ են: Դա հնա- գարյան կուլտուրայի ժողովուրդ է: Սակայն իշխանների, վարվա- ծատերերի, առևտրականների և վաճառուների տիրապետությունը



Նկար 5. Չինաստան, Մոնղոլական ժողովրդական հանրապետությունը Տուվինյան ժողովրդական հանրապետություն և Ճապոնիա:

հետ պահեց Չինաստանի զարգացումը: Ոտարերկրյա կապիտա- լիստների տերտնորիությունն վորոնք կեղեքում են Չինաստանը համարյա 100 տարի, ավելի ևս սաստկացրեց յերկրի տնտեսա- կան հետամնացությունը:

Չնայած քարածխի, յերկաթի և գունավոր մետաղների



հակայական պաշարները առարկությանը, Չինաստանում արդյունաբերությունը թույլ է դարձացած: Աղգարնակչության ճնշող մեծամասնությունը ( $\frac{4}{5}$ ) գրավում է գյուղատնտեսությունը: Բայց և գյուղատնտեսությունն էլ չափազանց հետամնաց է: Չինական գյուղացիության միայն  $\frac{1}{3}$ —ն է մշակում սեփական հող, գյուղացիների  $\frac{2}{3}$  վարձակալում է հողը կալվածատերերից, վճարելով դրա դիմաց բերքի 50 միջև 70 տոկոսը: Գյուղացիության մեծամասնության հողամասերը 1 հեկտարից պակաս են:

Վարձակալման կամ տուրքի վճարման համար ինչպես նաև սերմեր գնելու համար չափազանց լարվածություններից փող են պարտք վերցնում և այնուհետև դուրս չեն գալիս պարտքի տակից:

Յերաշտից ու հեղեղումից առաջացած բերքի կորուստը միլիոնավոր գյուղացիներին մատնում է քաղցի ու մահացության: Շատ գյուղացիներ բատրակություն են մտնում, կամ դառնում են սեփազուրկ բանավորներ— կուլիներ: Շատերը գնում են ֆաբրիկաներ: Չինաստանի ֆաբրիկաներում աշխատանքը դաժանորեն չահագործվում է: Բանվորական որը համապար և 14—16 ժամի, իսկ վարձատրումը հաղիվ է անհատում կիսաքաղց դրությունը:

1925—1926 թվերին Չինաստանում հակայական ուժով ծավալվեց ազգային— ազատագրական շարժումը: Դրան նպաստեց այն հանգամանքը, վոր 1914—18 թվերի համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում աճեց չինական արդյունաբերությունը, ուժեղացավ չինական ազգային բուրժուազիայի և ավելացան արդյունաբերական պրոլետարիատի կազմերը:

Չինաստանում հեղափոխական շարժման դարձացման վրա մեծ ազդեցություն թողեց մեր Հոկտեմբերյան հեղափոխությունը: Սակայն Չինական բուրժուազիան միախառնվեց չինական բանավորների և գյուղացիների բաղամիտին մասսաների հեղափոխական շարժման վիթխարի թափից և համաձայնություն գնաց հակահեղափոխության և օտարերկրյա կապիտալի հետ:

Սակայն հակահեղափոխությունը չհաջողվեց խեղդել հեղափոխական շարժումը, վորի գլուխը կանգնեց չինական Կոմունիստական կուսակցությունը: Չինաստանի մի շարք շրջաններում հաստատվեց խորհրդային իշխանություն:

Մտեղծվեց ուժեղ կարմիր բանակ: Չինաստանի Խորհրդային շրջաններում Կոմիտիսիկացիայի յենթարկվեց կալվածատիրական հողերն ու կուլակային տնտեսությունների հողերի ավելցուկը և բաժանվեց աշխատավորների միջև, սահմանվեց 8— ժամյա բանվորական որ, մտցվեց աշխատանքի պաշտպանություն, սոցիալական ապահովագրություն և այլն:

Ճապոնական իմպերիալիստները վաղուց ձգտում են այդ հակայական յերկիրը դարձնել իրենց գաղութը: Դեռ 1894 թվին Ճապոնիան կռվեց Չինաստանի դեմ և իրեց նրանից Ֆորմոզա կղզին: 1931—1932 թվերին Ճապոնացիները դրավեցին Մանջուրիան և Ներքին Մոնղոլիայի մի մասը: Իսկ 1937 թվին ճապոնական իմպերիալիստները, պատերազմ չհայտարարելով, սկսեցին ռազմական գործողությունները, Հյուսիսային և միջին Չինաստանում, դրավելով Բեյպինի և Շանհայի շրջանները: Գրավված շրջաններում Ճապոնացիները տմարդորեն ծաղր ու ծանալի յեն յենթարկում ազդարնակչությանը, վոջնչացնում են ամբողջ գյուղեր, սպանում են հազարավոր խաղաղ բնակիչների: Ճապոնական ինքնաթիռները ռմբակոծում և ավերում են չինական քաղաքները: Իմպերիալիստների ավաղակային հարձակումը ալեկոծեց չինական ժողովրդի միլիոնավոր մասսաներին: Չինաստանի Կոմունիստական կուսակցության նախաձեռնությամբ կազմակերպվեց հակահապոմակա միացյալ ազգային փրկում: Այդ ֆրոնտը ստեղծվեց Կոմունիստական կուսակցության և չինական կառավարական Գոմինդան կուսակցության— համագործակցության հիման վրա, Գոմինդանի, վորը կանգնեց լիտիացած Ճապոնական հափշտակիմների դեմ վճռական պայքարի ճանապարհի վրա: Մտեղծված է ազգային պաշտպանության կառավարություն և հայրենիքի պաշտպանության հակահապոմակա միացյալ բանակ:

Չինական ժողովրդի չտեսնված հայրենասիրական վերելքը, չինական ղեկավորների և ամբողջ բնակչության հերոսությունը, պայքարը Ճապոնական հետախուզության կողմից ուղարկված տրոցկիստական լրտեսների դեմ— այս ամենն արդեն տվեցին իրենց արդյունքները: Ճապոնացիների հարձակումը սկսում է շնչառապառվել, նրանց կողմից զավթած շրջաններում ծախված է ուժեղ սրտախեղանական շարժում, վորը զրկել է Ճապոնական զորքերին հանդիսա թիկունքից: Գործողությունները Չինաստանում «Ռադիկալ թեթև զրոսանքից», ինչպես այդ պատկերաց



նում ելին ճապոնական ռազմածորները, վերածվեցին մեծ յերկարահիգ պատերազմի: Այդ պատերազմը տրեցոր քամում է ճապոնացի ուժերը: Հափշտակիչները դեմ մղած պայքարում վիթխարի դեր է խաղում Հատուկ Ցաղ ժողովրդը— հեղափոխական բանակը, վորը կազմակերպվել է հյուսիսային Չինաստանում Չու Դե—ի հրամանատարութեամբ գործող նախկին կարմիր բանակի զորամասերից: Չինաստանի խորհրդային շրջանները վերանայեցին իրենց անկախության հաստատման համար շրջանների: Չինաստանի բազմամիլիոն վոլդ ժողովուրդը միավորվել է իր անկախութեան համար մղվող պայքարում:

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ՃՅՈՒՂԵՐԸ

Գյուղատնտեսութեանը հետամնաց է: Այսատող անասուններ կան միայն հարուստ տնտեսութեաններում: Մեքենաներ, նույնիսկ վոչ բարդ, չբավոր գյուղացին չի գործածում: Չբավորները, առանձնապես Հարավային և Միջին Չինաստանում, հողը մշակում են մեղքով, ինչպես բանջարանոցային մարդերը:

Տարվա ընթացքում մթնոլորտային տեղումների անհավասարաչափութեանը, հին ժամանակներում (1000—2000 տարի սրանից առաջ) ստիպեց չինացիներին կռուցել վոռողման ջրանցքներ: Այդ ջրանցքները այժմ գտնվում են վատթար վիճակում: Համառ, ծանր աշխատանքով չինական գյուղացիութեանը հաջողվում է հավաքել տարեկան 2—3 բերք:

Արևելյան Չինաստանի գլխավոր կուլտուրաներն են. բրինձ, ցորեն, բամբակ, կորեկ: Դրանից բրինձը գերակշռում է Հարավային և Միջին Չինաստանում, ցորենը և բամբակը— Միջինում, կորեկը՝ Հյուսիսայինում: Դրանից բացի Հյուսիսում մշակում են գառլյան, սոյային բակլաներ և գետնախառն (արախիս), վորոնք գործածվում են յուղ պատրաստելու համար, Միջին և Հարավային Չինաստանում— քեյը:

Անասնաբուծութեանը չինաստանում թույլ է զարգացած: Պահում են գերազանցապես խոզեր և տնային թռչուններ: Հարավային և Միջին Չինաստանում տարածված է շերամապահութեանը: Ինչպես արդեն նշեց, Չինաստանի արդյունաբերութեանը շատ հետամնաց է: Այդ յերկրում, վորտեղ ապրում է յերկրաշնչի բնակչութեան մոտ  $1/4$ —ը կան միայն մի քանի մետաղագործական գործարաններ: Գունավոր մետաղներն արտահանում են արտասահման՝ անմշակ ձևով: Չինաստանում մեքենայիստ-

թեան չկա: Չարգացած են միայն տեքստիլ արդյունաբերութեան ճյուղերը— բամբակեղենինը և մետաքսեղենինը: Չինաստանում շատ շատ են արհեստավոր ջուհակները: Տարածված է նաև հախճապակյա, փայտե լաքած իրերի և հովհարների տնայնագործական արդյունաբերութեանը:

Արևելյան Չինաստանում կան մի շարք խոշոր քաղաքներ, վորոնք գերազանցապես մոտ են ծովափին: Նրանից ամենամեծը Շանհայն է՝ միջին Չինաստանում ( $31\frac{1}{2}$  միլ. բնակիչներ), Չինական գլխավոր նավահանգիստ և արդյունաբերական կենտրոն (բամբակեղենի ու մետաքսի): Շանհայի գլավի մասը կազմում է այսպես կոչված Միջագային սետլմենտ (կլարտալ), վորը փաստորեն գտնվում է Անգլիայի ձեռքին: Սետլմենտում գտնվում են զանազան յերկրների կապիտալիստների ձեռնարկութեանները, առևտրական պահեստները և բանկերը:

1937 թ. վերջին Շանհայը գրավվեց ճապոնացիների կողմից, ընդվորում քաղաքի վորոշ մասերը ամբողջապես սովորված են:

Շանհայից հարավ ընկած է Խան— Չոու մեծ նավահանգիստը, իսկ Հյուսիս— Արևմուտքում, Յանցզի— Յիյան գետի վրա— Չինաստանի մայրաքաղաքը (1928 թվից)— Նանկինը:

Ճապոնական հափշտակիչների կողմից Նանկինը գրավված լինելու պատճառով մայրաքաղաքը ժամանակավորապես տեղափոխված է յերկրի խորքը— Չունցին, վորը գտնվում է Յանցզի— Յիյանի միջին հոսանքի վրա: Նանկինի և Չունցինի արանքում, նույն գետի վրա ընկած է Հանկոու, Չինական մետաղագործութեան կենտրոնը:

Հյուսիսային Չինաստանում գտնվում է Տյանցզինը (մոտ 1,3 միլ. բնակիչներով): Բեյյինը և Յինդաոն— բամբակեղենի արդյունաբերութեան կենտրոնները:

Բեյյինը (անցյալում Պեկին) յեղել է Չինաստանի մայրաքաղաքը:

Հարավային Չինաստանում գլխավոր քաղաքն է Կանտոնը, մետաքսի արդյունաբերութեան կենտրոն և նավահանգիստ: Նրանից վոչ հեռու, փոքր կղզու վրա, գտնվում են մի շարք խոշոր նավահանգիստներ և արդյունաբերական կենտրոն— Հոնկոնգը, վորը պատկանում է Անգլիային:

(Չինաստանի քաղաքները տես քարտեզի վրա էջ 25):



## ՄԱՆՁՈՒՐԻԱ

Մանջուրիան Չինաստանի մի մասն է, վորը 1931 թվին զբաղվեց Ճապոնիայի կողմից: Հարավում նա վողովում է Դեզին ծովով: Մանջուրիայի մեծ մասը հարթավայր է: Արևմուտքից անցնում է Մեծհինգան լեռնաշղթան: Ամուր գետը և Նրա վտակ Ուսուրին Մանջուրիան բաժանում է իՍՆՄ-ից:

Մանջուրիայի կլիման բարեխառն է, աղոտ է և Մուսսոնային քամիները: Հողը պտղաբեր է, վորը գոյացել է գլխավորապես գետի բերած տիղմով:

Մանջուրիայում կան քարձխի և յերկաթի հանքեր:

Մանջուրիան բռնում է ամբողջ Չինաստանի 1/10-ը, ունի 1 միլ. քառ. կմ. տարածություն: Ապրում են այնտեղ 33 միլիոն մարդ, գլխավորապես չինացիներ: Ազգաբնակչությունը զբաղվում է հողագործությամբ: Այստեղ մշակում են սոյային բականեր, գառլան, ցորեն:

1931 թվին ֆապոնական զիշատիչները գավառից Վանջուրիան, հայտարարելով այն իբր թե «ինքնուրույն» պետություն, («Մանջու-գո» կամ «Մանջու-Դիպո» — Մանջուրահան կայսրություն): Իրականում այնտեղ տիրապետությունում են Ճապոնական իմպերիալիստները, վորոնք կեղեքում են տեղական բնակչությանը:

Ճապոնացիները Մանջուրիայում հանում են քարածուխ և յերկաթ ու տանում Ճապոնիա: Տանում են նրանք պարենային մթերքը:

Ճապոնական ռազմամոլները Մանջուրիայում բազա յին պատրաստում իՍՆՄ-ի վրա հարձակվելու համար:

Մանջուրիայի քաղաքներն են, — Մուկդեն — հարավային Մանջուրիայի արգյունաբերական կենտրոնը:

Խալբին — Հյուսիսային Մանջուրիայի կենտրոնը, Սինցզին — (Նախ. Չանչունը) Մանջու-Գոյի «Մայրաքաղաքը»: Հարավային Մանջուրիայի յերկու նավահանգիստները — Ռյոդձյուն (Նախ. Պարտ-Արտուր) և Դայրենը, (Նախկին Դալենն) նրանց կից շրջ-

Ջանի հետ չեն մտնում Մանջուրիայի կազմի մեջ, այլ հանդիսանում են ճապոնական զաղութ — Կվանտուն անունով:

## ՆԵՐՔԻՆ ՄՈՆՂՈՒԿԱ

Ներքին Մոնղոլիան ընկած է Մանջուրիայից արևմուտք և Արևելեյան Չինաստանից դեպի հյուսիս: Նա բռնում է ընդարձակ Մոնղոլական սարահարթը (կամ Գոբի) մի մասը, վորը չարունակվում է Մոնղոլական ժողովրդական հանրապետության սահմաններում:

Մոնղոլական սարահարթը աչքի յն ընկնում չոր և խիտ ցամաքային կլիմայով: Հիմնականում դա Գոբի կամ Շամո ա-Պապատն է («Ավադի ովկիանոս»), տեղ-տեղ փոխարինելով կիսաանապատային չոր տափաստանի:

Ներքին Մոնղոլիան բռնում է 1 միլ. քառ. կմ. տարածություն, այսինքն ամբողջ Չինաստանի տարածության 1/10 մասը: Մակախն ապրում են այնտեղ միայն 8 միլ. մարդ: Ըստ ազգության — բնակչության 1/3 կազմում են Մոնղոլներ և 2/3-ը Չինացիներ:

Մոնղոլները զբաղվում են անասնապահությամբ և քոչում են տափաստանում վոլխարների, այծերի, ձիերի, ուղտերի և խոչոր յեղջերավոր անասունների հոտերի հետ: Այդ հոտերը պառկանում են Մոնղոլական իշխաններին և լամերին (կուսակրոններին), վորոնք շահագործում են արատներին (հովիվներին):

Հողագործության համար պիտանի հողերը հարավ-արևելեքում բնակեցված են չինացիներով: Մոնղոլիայի Հարավ-Արևելեքում գտնվում է Կալգան քաղաքը:

1932 թվին ներքին Մոնղոլիայի արևելեյան մասը գրավվեց Ճապոնացիների կողմից և միացվեց Մանջուրիային: 1937 թվին Ճապոնական ռազմամոլները գրավեցին և Կալգանը և ձգտում են գրավել ամբողջ Ներքին Մոնղոլիան:

## ՍԻՆՑՅԱՆ

Սինցզյանը, կամ Արևմտյան Չինաստանը (նույնպես և Չինական Թուրքեստանը) ընկած է դեպի արևմուտք՝ Ներքին Մոնղոլիայից և հյուսիսային Չինաստանից: Դա հարթություն է, վորը հատվում է Տյան-Շան և Կուն-Լուն լեռներով ու հանույ-



և Արևմուտքում մինչև Պամիրի ստորոտը: Կլիման ալպտեղ, ինչպես և Մոնղոլիայում խիստ ցամաքային է: Մինցզյանի մեծ մասը անապատ է (Տակլա-Մական), կամ չոր տափաստան է: Միայն դեռերի յերկարությամբ վորոնք հոսում են սարերից, ձգվում են սագիւնները— մշակվող հողերի շերտեր:

Մինցզյանը տարածությամբ մեծ է Ներքին Մոնղոլիայից, ունի 1,4 միլ. քառ. կմ. տարածություն, վորտեղ սակայն, ապրում են միայն 4 միլիոն մարդ: Ազգային կազմը շատ խառնադեղն է,— ույլուրներ (Ողրեկներին ազգակիցներ), կիրկիզներ, դազախներ, մոնղոլներ, չինացիներ և այլն: Բնակչությունը դրազվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Գաղաքները ընկած են սագիւններում և առետրի կենտրոններ են: Նշենք նրանցից Կաշգարը և կուլջան: Մինցզյանը գլխավորապես առետուր է անում ԽՍՀՄ-ի հետ:

## Տ Ի Բ Ե Տ

Տիրեալը ընկած է հարավային և միջին Չինաստանից դեպի արևմուտք, ամենաբարձր սարահարթն (ծովի մակերեվույթից 4 կմ), վորը հատվում է լեռներով և հարավից շրջապատված է աշխարհի ամենաբարձր լեռնաշղթայով— Հիմալայներով, իսկ Հյուսիսից՝ Կուեն-Լուն լեռնաշղթայով: Տիրեալի կլիման շատ դաժան է. ալպտեղ ձմեռը ուժեղ սառնամանիքներ են վրնում, իսկ ամառը— ցերեկը չոր, գիշերը՝ շատ ցուրտ:

Տիրեալի տարածությունը 2,6 միլ. քառ. կմ., իսկ բնակչությունն ընդամենը 2—4 միլիոն մարդ: Ազգությամբ դրանք տիրեցիկներ են: Նրանք գլխավորապես պարապում են անասնապահությամբ: Ալպտեղ պահում են Յակեր (սաղատավոր յեղներ յերկար բրթով), վոչխար և այծ: Հողագործությամբ դրազվում են միայն մի քանի դեռերի ափերին:

Մեծ ազդեցություն ունեն տիրեացիների մեջ հողեռակառնությունը— լամերը, վորոնք կառուցել են բազմաթիվ վանքեր: Լամերը կազմում են Տիրեալի վողջ բնակչության 1/5-ը:

Տիրեալի հարավային մասը կառավարում է Տիրեալի հողե-վորականություն պարապուրը— Դալայ-Լաման, վորը գտնվում է Անդլիայի ազդեցության տակ (անդլիացիները Տիրեալ մտան Հնդկաստանից, Հիմալայի վրայով): Դալայ-Լամայի մայրաքաղաքն է Լհասան:

## ՄՈՆԴՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

### ՏՈՒՎԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մոնղալական Ժողովրդական հանրապետության տարածությունն է 1,5 միլ. քառ. կիլոմետր: Բնակչությունը 840 հազար մարդ: Մայրաքաղաքը Ուլան-Բատոր:

Տուվինյան Ժողովրդական հանրապետության տարածությունը 170 հազ. քառ. կմ. բնակչությունը 86 հազար մարդ: Մայրաքաղաքը Կրգիլ:

Մոնղոլական Ժողովրդական հանրապետությունը (կամ Արտաքին Մոնղոլիան (դրադեցնում է Գոքի սարահարթի հարավային մասը և սահմանակից է Խորհրդային Միության հետ):

Գոքի սարահարթն ունի չոր, խիստ ցամաքային կլիմա, և ներկայացնում է մեծամասամբ կիսաանապատային տափաստան կոչա, չոր խոտերով, կամ անապատ: Միայն Հյուսիսում և Մոնղոլական Ալտայի ու Խանգայի լեռների արևմտյան լանջերում լինում են մեծ տեղումներ և աճում են փշատերեվ անտառներ ու խոտեր: Խանգայում սկսվում է Սելենգա գետը, վորը թափվում է Բայկալ լիճը: Սելենգայի վրայով տեղի յե ունենում նավային հաղորդակցությունը Մոնղոլիայի և ԽՍՀՄ-ի միջև:

Տուվինյան Ժողովրդական հանրապետությունը ընկած է Սայանյան լեռների և Տաննու-Ուրա լեռնաշղթայի միջև ընկած վոչ մեծ գոգավորության մեջ, Մոնղոլիայից դեպի Հյուսիս, և նույնպես սահմանակից է ԽՍՀՄ-ին: Ալպտեղ ևս դերակշռում են տափաստանները: Տուվայում իր սկիզբն է առնում մեր Սիբիրական մեծ գետ Յենիսեյը: (տես նկ. 5):

Մոնղոլիայում և Տուվայում կան նշանակալից հանածոների հարստություններ.— քարածուխ, աղ, յերկաթ, պղինձ, վոսկի, բայց դրանք դեռ քիչ են ուսումնասիրված:

Մոնղոլական Ժողովրդական հանրապետության բնակչությունը բաղկացած է մոնղոլներից: Տուվինյան Ժողովրդական հանրապետությունում ապրում են մոնղոլացիներին ազգակից—



սուսախոսներ, ինչպես և 10 հազար ուսանողներ, վորոնք վերաբնակվել են այստեղ 30-50 տարի առաջ: Տուվան դրամված էր ցարական Ռուսաստանի կողմից, իսկ Մոնղոլիան հաշվվում էր Զինաստանի տիրապետութունն բայց նույնպես գտնվում էր ցարական Ռուսաստանի ազդեցության ներքո: Մեր յերկրում 1921 թվի քաղաքացիական պատերազմի ժամանակ, Սիբիրում ջախջախված սպիտակավարդիական բանդաները նահանջեցին Մոնղոլիա և Տուվա ու սկսեցին այնտեղ «տերուտնորինությունը» անել: Մեր Կարմիր Բանակի ոգնությամբ այդ յերկրները աշխատաւորությունը սպիտակ դավադրականներին դուրս վռնեց և յերկու յերկրում էլ ստեղծեցին ժողովրդահեղափոխական կառավարություններ: Վորոշ ժամանակից հետո յերկու յերկրներն էլ հայտարարեցին իրենց ժողովրդական հանրապետություններ: Դրանք բոլրժուռ — դեմոկրատական հանրապետություններ են, բայց հասուկ տիպի, նրանք վոչնչացնում են ֆեոդալիզմի մնացորդները, զարգացնում են իրենց անտեսությունը, ամրացնում են իրենց անկախությունը, և վաչ կապիտալիստական զարգացման ուղում աստիճանաբար անցնելու հիմքն են դնում: Կառավարման բարձրագույն մարմիններն են այնտեղ Մեծ Խորալը (Խորհուրդ), վորը ընտրվում է ընդհանուր քվեարկությամբ և նրա կողմից առանձնացրած Մինխտրների խորհուրդը:

Յերկու յերկրների անտեսությունների մեջ գլխավոր դեր է խաղում այժմ էլ ֆաշիզմական անասնապահությունը (վոչխարներ, ուղտեր, ձիեր) և հետո մուշտակամորթ զազանների վորսը: Սակայն այժմ արատները (անասնապահներ) և վորսորդները չեն շահագործվում, ինչպես անցյալում մոնղոլական իշխանների, չինական ու ռուսական առեւտրականների կողմից, այլ աշխատում են իրենց համար: Մեծ աշխատանք է տարվում անասնապահության գործի բարելավման ուղղությամբ, կազմամակերպված է անասնաբուժական ոգնություն, խոտ է մթերվում ամառային յերաշտների և ձմեռային բուքերի դեպքում, ջրահորեր են փորում անասուններին ջրելու համար, ծածկոցներ են չինում անասունները սառնամանիքից պաշտպանելու համար: Նըվաճումներ են ձեռք բերված և հողագործության բնագավառում: Մոնղոլական ժողովրդական հանրապետությունում կառուցված են առաջին ֆաբրիկաներն ու գործարանները — մահուրի, թաղիքի և կաշվի վերամշակման մեծ կոմբինատ, ելեկտրոկայան,

մսի կոմբինատ, մեխանիկական, փայտամշակման և աղյուսի գործարաններ, ավտովերանորոգման արհեստանոց, տպարան:

Ստեղծված է տնայնագործական արդյունաբերություն, վորը միացված է արհեստավորական կոոպերացիայի մեջ: Յերկու յերկրներում էլ զգալի հաջողություններ են ձեռք բերված և կուլտուրայի զարգացման բնագավառում: Այդ հանրապետությունների տնտեսության և կենցաղի վերակառուցմանը նյութական ու կուլտուրական վիթխարի ոգնություն է ցույց տալիս Խորհրդային Միությանը: ԽՍՀՄ-ը Մոնղոլական ժողովրդական հանրապետության հետ փոխադարձ ոգնության պայմանագիր է կապել:



## Ճ Ա Պ Ո Ն Ի Ա

Տարածությունը՝ 382 հազ. ֆար. կմ., բնակչությունը՝ 69 միլ. մայրաքաղաքը— Տոկիո:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԴԻՐՔԸ,  
ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Ճապոնիան ընկած է Ճապոնական կղզիների վրա— Ասիական մայր ցամաքից դեպի արևելք: (Տես. նկ. 5): Այդ կղզիների մեջ աչքի յեն ընկնում՝ ամենամեծը— Հոնսյու (կամ Հոնգո), վորը տարածությամբ հավասար է Մեծ Բրիտանային, նրանից դեպի հյուսիս— Հոկկայդոն, և դեպի հարավ— Կյուսյուն ու Սիկոկու: Այդ կղզիները արևելքից վողողում են հաղաղ ովկիանոս իսկ արևմուտքից՝ Ճապոնական ծովով Հոնսյուն բաժանված է Միկոկուցից նեղուցով, վորը կոչվում է Ճապոնական նեղուց: Կյուսյուից դեպի հարավ ձգվում է Բյուսյու մանր կղզիների խումբը, իսկ Հոկայդոյից դեպի հյուսիս— արևելք Կուրիլյան կղզիների խումբը:

Գաղութային վիճակում Ճապոնիայում գտնվում են Սախալին կղզու հարավային կեսը, Կորեյա թերակղզին Լյաոտը (Կվանտուն) թերակղզու հարավային մասը, Ֆորմոզա կղզին և մի ամբողջ շարք մանր կղզիներ՝ Սադաո ովկիանոսում: Ճապոնիան դադութների հետ միասին բռնում է 681 հազ. քառ. կմ., 98 միլ. բնակչությամբ: Դրանից բացի, 1931 թվից Ճապոնիան փաստորեն իր գաղութն է դարձրել Մանչուրիան և ներքին Մոնղոլիայի մի մասը:

ԲՆԱԿԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ճապոնական կղզիները լեռնոտ են: Լեռները ձգվում են հյուսիսից դեպի հարավ մի քանի շղթաներով, վորոնց միջև ընկած են հովիտներ: Վոչ մեծ հարթավայրեր կան ծովափին: Ճապոնական լեռների միջին բարձրությունը մինչև 2 կիլոմետր է: Ամենաբարձր գագաթը Ֆուջիյամա հրաբխաբան է, (Հոնսյույի միջին մասում) 3,7 կմ. բարձրությամբ: Ճապոնիայում կան շատ գործող հրաբուխներ: Թեթևակի յերկրաշարժները, վորոնք բնակչությանը նկատելի չեն, բայց բռնվում է հատուկ գործիքներով (Սեամո-

գըրաֆներով), տեղի յեն ունենում Ճապոնիայի դանդաղ մասերում համարյա ամեն օր: Լինում են և ուժեղ յերկրաշարժներ: Դրանցից վերջինները տեղի յեն ունեցել 1923, 1927 և 1933 թվերին: 1923 թվի յերկրաշարժից կործանվեցին Տոկիո և Իոկոամա քաղաքները, սպանվեցին ավելի քան 100 հազար մարդ և վերափոխվեցին ավելի քան 400 հազար:

Ճապոնիայի մեծ մասի կլիման մերձ արևադարձային մուսսոնային է: Աղեցյուղություն է գործում ծովային շրջապատում և ովկիանոսից փչող յերկու հոսանքները— տաքը (Կուրո—Սիվոն)— հարավից և ցուրտը՝ (Ոյա—Սիվո)— հյուսիսից: Ամառային մուսսոնը բերում է ատառ անձրևներ: Ձմեռային մուսսոնը՝ Ասիա—Վան մայր ցամաքից բերում է սառը ող: Դրա հետևանքով Հոկայդոյում և Հոնսյույի Հյուսիսում ձյուն է դալիս: Մուսոնների փոփոխման ժամանակ դառնանք և աչնանք լինում են վըսանդավոր փոթորիկներ— տայֆուններ:

Ճապոնիայում լեռների լանջերը ծածկված են անտառներով, անաճնապես Հոկայդոյում և Հոնսյույի հյուսիսում, վորտեղ աճում են բարեխառն դոտու փշատրե և սաղարթավոր ծառեր:

Ճապոնիայի գետերը լեռնային են, աննալարելի: Նրանք ողտաղործվում են բրնձի դաշտերի վողողման համար:

Ճապոնիայի հանածոների հարստությունները մեծ չեն: Կյուսյում և Հոկայդոյում ցածրորակ և վոչ մեծ քանակությամբ ածուխ կա: Չանագան տեղերում կան մի քիչ նավթ և պղինձ: Մյուս մետաղների պաշարը աննշան է:

Ճապոնիայի շրջապատի ծովերը հարուստ են ձկներով:

ԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,  
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ,  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ


Ճապոնիայի բնակիչները— ֆապոնացիներ են, մոնղոլական խմբի մի ժողովուրդ, վորը աղգակից է չինացիներին: Հոկայդոյում կան այդ կղզու նախկին բնակչության մնացորդներ— Այները: Բնակչությունը դասավորված է անհավասար կերպով: Շատ նոսր են բնակեցված լեռնային շրջանները: Ամենից խիտը Հոնսյուի հարավն է:

Ճապոնիան— մանրախիտ յե կյայրի (միկադո) գլխավորությամբ, վորը հանդիսանում է անսահմանափակ ինքնակալ: Կառավարությունը կազմված է վարլաժատերերի, խոշոր կապիտալիստների և ուղմա—Փաշիստական կլիկի ներկայացուցիչների:



րից, վերջինս ձապոնիայում հակադարձաբան դեր է խաղում:

ձապոնիայում աշխատավորութունը բոլորովին իրավազուրկ է, բանվորական ու գյուղացիական բոլոր կազմակերպությունները արգելված են: Կոմունիստական կուսակցությունը քրջ — վաճ է խոր ընդհատակ: Ամբողջ ձապոնիան հեղեղված է լրտեսներով՝ դադարի վրասիկանություն գործակալներով: Ամենաման նշան քննադատություն և դժգոհություն արտահայտություն համար բանվորներին և գյուղացիներին բանտ են նետում, ուղարկում են ֆրոնտ: Յերկրում թագավորում է դաժան, արյունոտ ֆաշիստական տերրորը:



Նկար. 6. ձապոնիայի աշխարհագրական դիրքը. աշխարհի քարտեզի վրա սևով ցույց են տրված ձապոնիան և նրա գաղութները:

Ռազմական ծախսերի վիթխարի աճը, Չինական ժողովրդի դեմ մղվող պատերազմը տանում է դեպի ձապոնական գյուղի հետադարձ քայքայումը և քաղաքային պրոլետարիատի աղքատացումը, սաստիկ սրում է դասակարգային հակասությունները և ուժեղացնում է հեղափոխական խմորումները քաղաքում, գյուղում և բանակում: Դրան միանում է կեղեքված դադուկային մասսաների չզաղարկող պայքարը ընդդեմ՝ ձապոնական իմպերիալիզմի, ապստամբությունները Կորեայում և Ֆորմոզայում:

Խոր ընդհատակում ձապոնիայի կոմունիստական կուսակցությունը աշխատավորությանը սրաքարի յե կազմակերպում ընդդեմ ֆաշիզմի:

ձապոնիայի գյուղատնտեսությունը հետամնաց է: ձապոնական գյուղացիների կեսից ավելին հողագուրդ են: Նրանք կալվածատերերին վարձակալած հողի համար վճարում են բերքի  $\frac{1}{2}$ — $\frac{2}{3}$ —ը: Գյուղացիներն իրենց տնտեսությունը վարում են մանրագույն հողակտորների վրա՝ մինչև մեկ հեկտար, և նույնիսկ մինչև 0,5 հեկտարի չափով: Հետադարձյան բրիչը — ձապոնիայի չքավոր և միջակ գյուղացու գյուղատնտեսական գլխավոր գործիքն է: Գյուղացիների ճնշող մեծամասնությունը անասուն չունի, ձի չունեցողները 70 տոկոսից ավել են: ձապոնիայում մարդեր կան, վորտեղ 53 տնտեսությանն ընկնում է մեկ խոշոր յեղջերավոր անասուն:

ձապոնիայի գլխավոր կուլտուրան բրինձն է: Այն ցանում են ամբողջ յերկրում՝ հովիտներում և մերձավայր հարթավայրերում:

Հարավային ձապոնիայում մշակվում են թեյ, մանդարիններ, լիմոններ և պահում են շերամի վարդ:

Հոկայդոյում, բրնձից բացի, ցանում են ցորեն և պահում են անասուններ: ձապոնիայի մեացած մասում ժողովուրդը համարյա թե հաց, միս, կաթ և յուղ չի գործածում: Հիմնականում սնվում են բրնձով, ձկնով և բուսական յուղով (սոյայի յուղ):

ձապոնական արդյունաբերությունը արտադրում է բալբակեղենի և մետաքսի գործվածքներ, ֆիմիական ներկեր, արհեստական մետաքս, մեքենաներ, նավեր: Վերջին ժամանակներս Չինաստանում վարվող պատերազմի և ձապոնական իմպերիալիստների ռազմական հետադարձ պլանների կապակցությամբ, յերկրում աճում է սպառազինման միջոցների արտադրությունը:

ձապոնիայում դարդացած է հին արհեստային արտադրությունը, մասնավորապես մետաքսի և թղթի լինվացքների (հովհարներ, հովանոցներ, լապտիկներ), դեղարվեստորեն դարդարած փայտյա լինվածքների, հաղձապակյա ամաններ, ֆիզուրաների և այլնի արտադրությունը:

ձապոնական գյուղի աղքատացման կապակցությամբ, վորը բանվորական ուժով մատակարարում է ֆաբրիկաներին, ձապոնիայի արդյունաբերության մեջ չափազանց ցածր է աշխատավարձը և դաժան է աշխատանքի չահագործումը: Առանձնապես չահագործում են դեռահաս աղջիկներին և յերեխաներին վո-



բոնց աղքատացող ծնողները ծախում են Փարբրիկային, սովորաբար 5 տարով: Աշխատանքի ծանր պայմանները հետևանքով այդ յերերկրաները և դեռահասները 5 տարվա ժամանակամիջոցում հաշմանդամներ են դառնում: Ճապոնիայի ժողովրդական մասսաների աղքատացումը նպաստում է պոռնիկության լայն ծավալմանը:

Ճապոնիայի գլխավոր քաղաքները կենտրոնացված են Յոնտոկյի հարավում: Այստեղ խաղաղ ուղիւնոսի ափին ընկած է Տոկիոն, մայրաքաղաքը և Ճապոնիայի ամենամեծ քաղաքը (արվարձաններով 5,8 միլ. բնակչությամբ), վորը ավերվեց 1923 թվականի յերկրաշարժի ժամանակ և ապա նորից վերաշինվեց: Տոկիոյում չառ Փարբրիկաներ և գործարաններ կան:


Տոկիոյից վոչ հեռու գտնվում է մեծ նավահանգիստ և արդյունաբերական կենտրոն Իոկոհաման: (Քաղ. տես քարտեզի վրա, նկ. 7):

Ավելի արևմուտք, Ճապոնական ծովի մոտ, գտնվում է Ճապոնիայի բամբակեղենի արդյունաբերության գլխավոր կենտրոն Ոսական և նավաշինարարության կենտրոն Կոբե նավահանգիստը: Ոսակայից ավելի հյուսիս ընկած է Կիոտոն, վորը մի ժամանակ (մինչև 1868 թիվը) յեղել է Ճապոնիայի մայրաքաղաքը: Ի տարբերություն Տոկիոյի և Ոսակայի, վորոնք արտաքինով միանդամայն նման են յեվրոպական քաղաքներին, Կիոտոն ճապոնական աղագային բնույթ է կրում ինչպես արտաքին տեսքով, այնպես էլ տնտեսական մասնագիտացումով, — նրանում դարդացած է թրդթից, մետաքսից, հաղձապակուց, փայտից շինվածքների հնուգույն ճապոնական արհեստային արտադրությունները:

Ոսակոյի և Տոկիոյի միջև ընկած է Նագոյան — ռազմական արդյունաբերության նոր կենտրոնը: Կյոտոյու կղզու վրա տեղավորված են հետեյալ քաղաքները — Ֆուկուոկան — քարածխի հանույթի կենտրոն, Յավատան՝ պողպատ ձուլող գործարաններով և Մոնգի ու Նագասակի նավահանգիստները: Հոկկայդոյի վրա գտնվող քաղաքներն են՝ Հակոդատեն, նավահանգիստ և ձկնակրեսերվային արդյունաբերության կենտրոն, Մուրաբան — քարածխահանույթի կենտրոնը, և Սապպորան՝ անդի արդյունաբերության կենտրոն:

ՃԱՊՈՆԱԿԱՆ  
ԻՍԳԵՐԻԱԼԻՋՄԸ

Ճապոնական իմպերիալիստները և ռազմամուկները յերազում են ստեղծել հսկայական մի կայսրություն, վորը ընդգրկի համարյա թե ամբողջ Ասիան: Գրավումների պատրաստվելով, նրանք ուժեղ կերպով սպառազինվում են: Ճապոնիան ռազմական դաշինք կնքեց Ֆաշիստական տերություններին — Գերմանիայի և Իտալիայի հետ: Ճապոնական իմպերիալիստները ամբողջ ժամանակ պատերազմի պրովակացիա յեն սարքում ԽՍՀՄ-ի դեմ: 1938 թվի ոգոստոսին



Նկար 7. Ճապոնիայի արդյունաբերական շրջանները և քաղաքները:

Ճապոնական ռազմամուկները լկտիարար խախտեցին Խորհրդային սահմանը և գրավեցին խոսան լճի մոտ (Հարավ — Արևմուտք Վլադիվատոկից) գտնող Ջաոդերնայա և Բեդիմյանայա բարձրունքները: Կարմրադրոջ Հեռավոր արեւելյան ճակատի գորամասերի հզոր հարվածով ճապոնական հախչատկիչները հետ չըպրուվեցին իրենց տերիտորիան՝ իրենց համար հսկայական կորուստներով, և Խորհրդային սրբադան հողը լիովին մաքրվեց ճապոնական սամուրայներից:



1931 թվին ճապոնական ռազմամորենքը խլեցին Չինաստանից Մանջուրիան, 1932 թվին— ներքին Մոնղոլիայի մի մասը: 1937 թվին ճապոնական իմպերիալիստները, հույս ունենալով առանց առանձնակի դժվարութեան դասվթեկ ամբողջ Չինաստանը, իրենց զորքերը տեղափոխեցին Չինական ափ և սկսեցին հարձակումը: Սակայն ճապոնական ըկտի հարձակումը չինական ժողովրդի աջ-  
ալիսի տերտ համախմբվածութուն առաջացրեց, այնպիսի հզոր ու միասնական հայրենասիրական վերելք և բանակի ու բնակչության կողմից այնպիսի հերոսական դիմադրութուն, վուր ճապոնական պլանները ձախողվեցին: Ճապոնիան հարկադրված է Չինաստան ուղարկել միջոց նոր ու նոր դիվիզիաներ, վիթխարի միջոցներ վատնելով պատերազմի վրա: Պատերազմի յերկարաձգումը Չինաստանում խախտեց ճապոնիայի ֆինանսները և նրա վողջ տըն-տեսութեանը:

# ՍՏՈՒԳԻԶ ՆԱԳԵՐ ՅԵԼ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Նկարագրեցեք արևելյան Չինաստանի, Մանջուր-  
յայի, Ներքին Մոնղոլիայի, Սինցզյանի և Տիբետի  
մակերեկություն ու կլիման:
2. Ի՞նչ ծովեր են վողողում Չինաստանը:
3. Թվեցեք այն յերեք շրջանները, վողոնց բաժանվում է Արևելյան  
Չինաստանը: Վոր գետերը և վոր քաղաքներն են ընկած այդ շրջաններից յու-  
րաքանչյուրում:
4. Պատմեցեք իմպերիալիստների կողմից Չինաստանի ստրկացման յեվ  
ճապոնական հափշտակիչների դեմ չինական ժողովրդի հերոսական պայքարի  
մասին:
5. Ի՞նչ կուլտուրաներ են մշակվում արևելյան Չինաստանում:
6. Ինչո՞վ է զբաղվում Տիբետի, Սինցզյանի, և Ներքին Մոնղոլիայի բնակ-  
չութունը:
7. Նկարագրեցեք Մոնղոլական և Տուվինյան ժողովրդական հանրապե-  
տութունները մակերեկություն ու կլիման:
8. Ինչպե՞ս են վերահասուցում իրենց կյանքը Մոնղոլական և Տուվին-  
յան հանրապետութունների ժողովուրդները:
9. Ինչպե՞սի՞ կողմերի վրա յի տեղավորված ճապոնիան, և ինչպիսի ծո-  
վերով է շրջապատված նա: Ինչ գողութներ յի նա տիրում:
10. Բնութագրեցեք ճապոնիայի մակերեկությունը և կլիման:
11. Պատմեցեք ճապոնիայի գյուղատնտեսութեան և արդյունաբերու-  
թեան մասին և նկարագրեցեք ճապոնական գյուղացիների և բանվորների  
դրութունը:
12. Թվեցեք և քարտեզի վրա ցույց տվեք ճապոնիայի մայրաքաղաքը  
և նրա կարեվորագույն քաղաքները:
13. Պատմեցեք ճապոնական իմպերիալիստների ագրեսիվութեան մասին:

# Ա Ֆ Ր Ի Կ Ա

Աֆրիկան իր զբաղեցրած տարածութեամբ 30 միլ. քառ. կմ.  
3 անգամ մեծ է Յեվրոպայից և 11/2 անգամ վողք Ասիայից: Բայց  
տարած էն այնտեղ ընդամենը 150 միլ. մարդ— 7 անգամ քիչ,  
քան թե Ասիայում:

Աֆրիկան հյուսիսիում բաժանվում է Յեվրոպայից Միջերկը-  
րական ծովով և Զիբրալթարի նեղուցով: Հյուսիս—Արևելքում  
նա միանում է Ասիայի հետ Սուեզի պարանոցով, վողք վրայով  
վողված է Սուեզի ջրանցքը:

Արևելքից Աֆրիկային վողողում է Հնդկական ովկիանոսը  
և նրա առաջացրած Կարմիր ծովը, արևմուտքից— Ատլանտյան  
ովկիանոսը: Աֆրիկայի ափերը վատ են կախված: Արևմուտքում  
կա միայն մեկ մեծ ծոց— Գվինեյի ծոցը: Արևելքում  
բարձրանում է Սոմալիի թերակղզին:

Աֆրիկայի հարավ—արևելյան ափի մոտ ընկած է մեծ կղզի  
Մադագասկարը, վողք բաժանված է մայր ցամաքից Մոզամբիկի  
նեղուցով:

Աֆրիկայի մակերեկութը մի ուրիշակ է, համարյա նա ամբող-  
ջապես Սարահարթ է: Հյուսիս արևմուտքում ձգվում են Ատլաս  
լեռները, Արևելքում—Հարեչական և հարավ—արեվելքում—  
Դրակոնյան լեռները: Արևելյան Աֆրիկայում անցնում է մի հսկա  
վոս ընկած տեղ, վողում ընկած են վիկտորիա, Տանգանիկա,  
Նյասա և ուրիշ լճեր: Փոս ընկած տեղի կողքերից կան բարձր  
հրաբխային մասսիվներ (Կենիա և Կիլիմանջարո): Հարթ են  
միայն ափի նեղ շերտերը և Նիգերա ու Նեղոս գետերի հովիտ-  
ները:


Աֆրիկան տեղալորված է հասարակածի յերկու կողմերում և  
իր մեծ մասով ընկած է արեադարձային գոտում: Միայն հյուսի-  
սային ծայրը և հարավայինը գտնվում են բարեխառն գոտու  
յենթարեադարձային գոնայում (շերտում): Մենք քնենք Աֆրի-  
կան մանրամասնաբար ըստ նրա յերեք մասերի— 1. Միջին, 2.  
Հյուսիսային, 3 Հարավային:

# ՄԻՋԻՆ ԱՖՐԻԿԱ

Միջին Աֆրիկան դա արեվադարձային անտառատափառա-  
նի և արեվադարձային անտառի շրջան է:

Միջին Աֆրիկան ընկած է մոտավորապես հյուսիսային





Նկար 8. Աֆրիկայի ծովերը, լճերը և գետերը:

լայնություն 17 աստիճանի և հարավային լայնություն 23 աստիճանի միջև, այսինքն տաք դոտում:

Հասարակածի մոտ, Կոնգո գետի ավազանում և Գվինեյի ծոցի ափին — հատկապես տաք և խոնավ է կլիման (մինչև 10 մետր տեղումներ տարին): Ընդվորում չողը և խոնավությունը միաչափ են ամբողջ տարվա ընթացքում: Այստեղ կան փարթամ արևմտադարձային անտառներ, վորտեղ առանձին ծառեր հասնում են 70 մետր բարձրության: Ներքևից խոտի խիտ և բարձր մանրանտառ է ու թփուտներ:

Ծառերի ճյուղերի բները պարուրված են փաթաթվող բույ-

սերով — պատուտակներով, յերբեմն մարդկային թևի հաստությամբ:

Պատուտակները միահյուսվում են և անտառը դարձնում անանցանելի: Արևմտադարձային անտառներում միշտ կանգնում և կիսախավարը:

Արևմտադարձային անտառում կան մեծ քանակությամբ թռչուններ և կապիկներ, մասնավորապես մարդանման — Շիմպանզեն և Գորիլլա: Արևմտադարձային անտառային շերտերում տարածված է թռչնավոր ճանճ — Յե—Յե, վորի խայթոցը մահացու է տնային կենդանիների համար և մարդկանց մեջ առաջացնում է քնային հիվանդություն:

Միջին Աֆրիկայի մնացած մասում անձրևային և չորային ժամանակները հաջորդում են իրար: Հասարակածին մոտ այդ հաջորդումը լինում է տարին 4 անգամ, իսկ հասարակածից հեռու — տարին յերկու անգամ: Այստեղ — արևադարձային անտառատափաստան է կամ սավաններ: Այդ լայնարձակ տարածությունները վոր ծածկված են բարձր խոտով, նրանց վրա փովել վոչ մեծ մարդագետիներով կամ արևմտադարձային դոտու ծառերի խմբերով (Բաոբաներ, ակացիաներ, միմոզներ, արմավենիներ): Չոր ժամանակ սավաններում խոտը այրվում է:

Սավաններում լինում են շատ կենդանիներ — այծեղջուրներ, վաղբառի, ջալամներ, ընձուղտներ, անտառների յեղբերում — այլույծներ, բորենի, փղեր, շնագայլեր, ընդյեղջուրներ, գետերում և լճերում բեղեմոտներ, կոկորդիլոսներ:

Հողը միջին Ասիայում պտղաբեր է (կարմրահողեր) և հերկելու դեպքում տալիս է լավ բերք:

Միջին Աֆրիկան հարուստ է բազմաթիվ հանածոներով՝ պղինձով, անագով, վոսկով, յերկաթով, աղով:

Միջին Աֆրիկան բնակեցված է բազմաթիվ բնակչությամբ և անգրական ցեղերով: Սավանների հյուսիսային շերտում (վորը կոչվում է Սուդան), ապրում են շատ բարձր և ուժեղ ուղանական նեգրերի ցեղերը: Վերջապես, անտառներում հանդիպում են նեգրեր — զաճաճների ցեղերը, վորոնց հասակը մեր 12-ամյա յերեթաների հասակի չափ է:

Միջին Աֆրիկայի հյուսիս — արևմտյանում ապրում են Հաբեշներ (կամ Եֆիոպները) և Սոմալիցները:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐԻ ԳԱՂՈՒԹՆԵՐԸ Միջին Աֆրիկան, ինչպես և Աֆրիկան ամբողջությամբ, դավթված է իմպերիալիստական պետությունների կողմից, վորոնք նրան



բաժանել են իրար մեջ: Գլխինեյի ծոցի ափը և Սավանների շերտը նրանից դեպի հյուսիս (Սուդան) մեծ մասով պատկանում է Ֆրանսիային: Ֆրանսիական տիրապետությունները կազմում են գաղութների յերկու խումբ — Ֆրանսիական արևմտյան Աֆրիկա, և Ֆրանսիական եկվատորյալ Աֆրիկա: Նրանց միջև ընկած է Մեծ Բրիտանիայի գաղութները՝ Նիգերիա, Վոսկեսա և այլն: Լիբերիան ձեվականորեն ինքնուրույն հանրապետություն է, փաստորեն ամբողջապես կախված՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներից: Աֆրիկայի հարավում ընկած են հետևյալ գաղութները՝ Բելգիայինը՝ Բելգիական Կոնգո, Պորթուգալիայինը — Անգոլան և մեծ Բրիտանիայինը — Բոդեվիան: (Տես Նկ. 9):

Միջին Աֆրիկայի արեվելյան մասում ընկած են Մեծ Բրիտանիայի գաղութները — Անգլո — յեգիպտական Սուդանը և Բրիտանական Արևելյան Աֆրիկան, Պորթուգալիայինը — Մոզամբիկ, Իտալիայինը — Երիտրիա, Նույնպես և Սոմալիին, վորը բաժանված է Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև, և Հարեջատանը (Եֆիոպիա), վորը յերկու տարի առաջ զավթվել է Ֆաշիստական Իտալիայի կողմից:

Հարեջատանի ժողովուրդը, վորը հերոսաբար պաշտպանում էր իր հայրենիքը, չխոնարհեց դուռնը Ֆաշիստական հալածող-կիշներին առաջ, համառ պարտիզանական պատերազմը Հարեջատանի շատ մասերում շարունակվում է և այժմ:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ Միջին Աֆրիկայի բնակչությունը դրավում է հողագործությամբ և վորսով: Հողը մշակում են նախնադարյան յեղանակով — բահ ու բրիչով: ցանում են Աֆրիկական կորեկ — դուրբու, յեգիպտացորեն, բակլա, դդում և այլ կուլտուրաներ: Ոտարյեղրյա կապիտալիստներն Աֆրիկայում զավթել են մեծ հողային տարածություններ և հարկադրանքի զանազան յեղանակներով ստիպում են տեղական բնակչությանը մշակել այն: Այդ տարածությունների վրա ստեղծված են բամբակի, սուրճի, կակաոի, ծխախոտի, արմավենու ծառերի, կաուչուկատու ծառերի պլանտացիաներ: Պլանտացիաներից ստացված մթերքները արտահանվում են իմպերիալիստական ճերկրները:

Միջին Աֆրիկայի ներքի մասում վորսը խաղում է մեծ դեր: Վորպես գենք շատ տարածված է աղեղը թունավոր նե, առվ:

Փղեր վորսալով ձեռք են բերում վղային վոսկոր, վորն արտահանում են արտասահման:

Միջին Աֆրիկայում վերամշակվող արդյունաբերություն չկա: Թանգարթեք հանածոների հանքերը դրավված են ոտարյեղրյա կապիտալիստների կողմից: Առանձնապես մշակվում է պղնձի հանքերը (Կոնգոյում), Անագինը՝ — (Նիգերիայում), մարգանցինը՝ (Վոսկեսա և արմատների և վոսկու):

Հանքահորերում և պլանտացիաներում հարկադրաբար աշխատում են բուն բնակիչները: Նրանք գտնվում են կիսաճորտային վիճակում: Նրանց նկատմամբ դործածվում է մարմնական պատիժներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԻԿԱ

Աֆրիկայի հյուսիսային մասը, 17 աստիճան հյուսիսային լայնությունից մինչև Միջերկրական ծովի ափը, իրենից հիմնականում ներկայացնում է վիթխարի մի անապատ — Սահարան: Սահարայի արեվելյան մասը կոչվում է Լիվինյան անապատ:

Սահարան ունի շատ չոք և չոր կլիմա: Շոգը ցերեկը հասնում է ստվերի տակ 40 աստիճան և նույնիսկ 50 աստիճանի: Գիշերները հով են լինում: Անձրեվներ տեղում են տարեկան 1—2 անգամ իսկ յերբեմն ել մի քանի տարի անցնում է առանց անձրեվի: Սահարայի հողը տեղ տեղ քարքարոտ է, տեղ — տեղ ել ավազոտ: Համըրվում են վոշոտ թփուտներ, չոր խոտեր և դրին — չոր բանջար, վորը ուղտերի համար կեր է ծառայում: Տեղ — տեղ, հատկապես Սահարայի հարավում, ձգվում է չոր տափաստանի շերտը: Այնտեղ, վորտեղ գետնի տակից գետնաջրերի աղբյուրներ են դուրս գալիս, փոխված են ոաղիաները վոշոնիկյան արմավենիներով, նուր և ծիրանի ծառերով: Այդ ոաղիաներում ապրում է նստակյաց բնակչությունը:

Լիվիական անապատի մեջ առանձին վիճակի մեջ է Նեղոս գետի հովիտը: Նեղոսը առաջանում է յերկու գետերի — ձերմալ ու Կապույտ Նեղոսների խառնուրդից: Նրանք յերկուսն ել սկսվում են Միջին Աֆրիկայում, — ձերմալ Նեղոսը՝ Վիկտորիա լիճը, Կապույտը՝ Հարեջական լեռների Տրանս լճից: Անձրեվոտ և չոր Ժամանակները կանոնավոր հերթափոխումները Միջին Աֆրիկայում բերում են Նեղոսի նույնքան կանոնավոր հեղեղման — տարին յերկու անգամ: Հեղեղումները վոչ միայն







- |                                       |                                         |
|---------------------------------------|-----------------------------------------|
| 9. Կամերուն (մանդատ)                  | } Ֆրանսիական Նեվադա-<br>բիալ Աֆրիկա     |
| 10. Գաբոն                             |                                         |
| 11. Ֆրանսիական կոնգո                  |                                         |
| 12. Ուբանգի Շարի                      |                                         |
| 13. Ունդանդա                          | } Բրիտանական Արևելյան<br>Աֆրիկա         |
| 14. Յենիա                             |                                         |
| 15. Տանգանիկա (մանդատ)                |                                         |
| 16. Նյանտալենդ                        |                                         |
| 17. Հյուսիսային Ռոդեզիա               | } Բրիտանական Հարավային<br>Աֆրիկա        |
| 18. Հարավային Ռոդեզիա                 |                                         |
| 19. Բեչուանալենդ                      | } Հարավ-Աֆրիկական<br>Միության գաղութներ |
| 20. Հարավ-Արևմտյան<br>Աֆրիկա (մանդատ) |                                         |
| 21. Բազուտոլենդ                       |                                         |
| 22. Սվազիլենդ                         |                                         |

**բ) Հարավ-Արևմտյան Ասիայում**

- |                       |                                                 |                          |
|-----------------------|-------------------------------------------------|--------------------------|
| 23. Պաղեստին (մանդատ) | } Բրիտանական գաղութներ<br>Հարավային Սրբալիայում | 30. Ֆրանսիական<br>Սոմալի |
| 24. Կենդիոգրանան »    |                                                 |                          |
| 25. Կովեյտ            |                                                 |                          |
| 26. Չոբո գոտի         |                                                 |                          |
| 27. Համան             |                                                 |                          |
| 28. Գաբրամաուս        |                                                 | 31. Բրիտանական<br>Սոմալի |
| 29. Ադեն              |                                                 |                          |

**Ծանոթություն.**—Հիշյալ գաղութներից մանդատային յերկրներ (տես 11-րդ էջը) համարվում են Աֆրիկայում գերմանական նախկին գաղութները՝ Տոգոն, Կամերունը, Տանգանիկան և Հարավ-Արևմտյան Աֆրիկան. Ասիայում-Թյուրքական նախկին մարզեր՝ Սիրիան, Պաղեստինը և Անդրհորդանանը:

**ՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ** Հյուսիսային Աֆրիկայի ամենից ավելի դար-  
պացած մասը Ֆեզիպոսն է, ավելի ճիշտ, Նեղոսի հովիտը և  
Ֆրանսիական գաղութները՝ Հյուսիս-արևմուտքում:

Ֆեզիպոսում, Նեղոսի հովիտում զարգացած է հողագոր-  
ծությունը: Այնտեղ տարին յերեք անգամ բերք են հավաքվում:  
Անդլիան, իր Փարրիկանների համար բամբակի կարիքն զգալով  
Ֆեզիպոսը վերածեց միակողմանի մասնագիտացրած բամբա-  
կագործական չրջանի: Վորակով յեզիպոսական բամբակը ամե-  
նալավն է աշխարհում:

Ֆեզիպոսի յերկրորդական կուլտուրաներն են—չաքարեղեքը,  
բրինձը, յեզիպոսացորենը և այլն: Բամբակի պլանտացիաների  
ընդարձակման համար անդլիացիները կառուցել են մի  
չարժ իրրիգացիոն (վոռոգման) ամբարտակներ, վորոնք բարձ-

րացնում են Նեղոսի ջրի մակարդակը և ուժեղացնում են նրա  
հեղեղումը: Ֆեզիպոսական դյուղացիությունն ունի յիոթրիկ հո-  
ղակտորներ—  $\frac{1}{2}$  հեկտարից էլ քիչ: Հողագործի դյուղացիու-  
թյունը կալվածատերերից վաճակալում է հողը ստրկացուցիչ  
պայմաններով: Վոռոգման կառուցումներից ոգտվելու համար  
հարկ է լինում վճարել կապիտալիստներին բալվական դրամ:

Ֆեզիպոսում կան արդյունաբերությունյան սաղմեր,— բամ-  
բակեղենի դործարաններ, ծխախոտի և վոչ մեծ աեքստիլ ֆաբ-  
րիկաներ:

Ֆեզիպոսի քաղաքներից պետք է նշել՝ նրա մայրաքաղա-  
քը— Կայիրը, Միջերկրական ծովի վրա նավահանգիստ և յերկ-  
րի խոշորագույն կենտրոն— Ալեկսանդրիան, Սուեզի ջրանցքի  
մոտ նավահանգիստ Պորտ— Սաիդը:

Աֆրիկայի Հյուսիս— արեվելքում, Թունիսում, Ալժիրում և  
Մարոկկոյում, մերձափնյա շերտում մշակում են ցորեն, դարի,  
խաղող, ձիթապտուղ և ծխախոտ: Ալժիրում և Մարոկկոյում  
արտահանման համար հանում են յերկաթ, Թունիսում — ֆոս-  
ֆորիտ:

Գլխավոր քաղաքները,— Ալժիրում— Ալժիր, Թունիսում—  
Թունիս, Ֆրանսիական Մարոկկոյում Ֆեզը, Իսպանական Մա-  
րոկկոյում— Տետուանը և Սեուտան, վորը դերմանական ֆա-  
շիստների կողմից վեր է ածվել ծովային ամբուլթյան:

Հյուսիսային Աֆրիկայի միացած մասը կամ անապատ է,  
կամ կիսանապատային տափաստան, քոչվոր բնակչությամբ,  
վորը պահում է ուղտեր, վոչխարներ և ձիեր: Ուղիսներում  
զբաղվում են հողագործությամբ:

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ**

Հարավային Աֆրիկան (Հարավային լայնությունից 23 ա-  
տիճան դեպի հարավ), ինչպես և Հյուսիսայինը, հանդիսանում  
է տափաստանների և անապատների շրջան: Նրա արեվելյան  
կողմում Դրականյան լեռներն են: Կենտրոնում գտնվում է Կա-  
լախարի անապատը:

Հարավային Աֆրիկայում գտնվում են աշխարհում ամենա-  
խոշոր վոսկու և ալմաստի հանքերը: Կան նաև քարածխի, յեր-  
կաթի և ուրիշ մետաղների հանքեր:

Այստեղ հիմնական բնակչությունն է՝ բանտուի նեգրերը,  
բուշմենները և հոտենտոտները: Հարավում և հարավ— արեվել-



ըստ շատ են (մոտ 2 միլ.) Յեվրոպայից յեկած վերաբնակիչները — հայանդացիներ (կամ բուրեր) և անգլիացիներ :

Հարավային Աֆրիկայի մեծ մասը մտնում է Բրիտանական իմպերիայի կազմի մեջ, վորպես ինքնավար դոմինիոն, Հարավ—Աֆրիկական—Միութեան անունով : Սակայն այդ ինքնավարութեամբ ոգտվում է միայն սպիտակ աղգաբնակչութիւնը — անգլիացիները և հոլանդացիները : Հիմնական բնակչութիւնը վոչ միայն չի մասնակցում իր յերկրի կառավարման մեջ, այլ և գտնվում է կիսաճորտ վիճակում : Ինչպես և Հյուսիսային Աֆրիկայում նրանց հարկադրում են աշխատել սպիտակ կապիտալիստների գաշտերում և հանքերում, նրանց վճռում են իրենց պապական հողերից դեպի անպտուղ տափաստաններն ու անապատները, հետապնդման ու մարմնական պատժի յեն յենութեամբ :

Հարավային Աֆրիկայի արեւմտյան մասը հանդիսանում է Հարավ — Աֆրիկական միութեան գաղութը (Հարավ — արեւմտյան Աֆրիկա անունով) :

Տնտեսութեան մեջ ղլխավոր դերը խաղում է վոսկու և ալմասի հանույթը, վորը արտահանվում է Անգլիա : Վերջին տասնամյակում կառուցված են մի շարք գործարաններ և ֆաբրիկաներ (սննդի, տեքստիլ) : Շատ զարգացած է վոչխարաբուծութիւնը, վորն Անգլիա արտահանելու համար բուրդ է տալիս :

Հողագործութիւնը արհեստական վոռուղում է պահանջում և թույլ է դարգացած : Յանում են գերազանցապէս յեղիպտոցորեն : Մերձափնյա հարավ — արեւելեյան շերտում անգլիական և բուրական ֆերմերները (գյուղական տնտեսութիւնները) ցանում են ցորեն և յենթաարեւադարձային կուլտուրաներ, շաքարեղեգ, բամբակ, ծխախոտ և այլն :

Հարավ — Աֆրիկական Միութեան քաղաքները մայրաքաղաքը — Պրետորիան, նավահանգիստ — Կեպտաուն (կամ կապչտադտ (և վոսկու հանույթի չրջանում խոշոր արդյունաբերական կենտրոն՝ Իոգանսբուրգը :

1. Ինչպիսի ուղիկանոսներ, ծովեր և ծոցեր են վոգողում Աֆրիկան : 2. Ինչպես է բաժանված Աֆրիկան իմպերալիստների միջև : Ինչպիսի յերկրներ են ընկած Հյուսիսային և Հարավային Աֆրիկայում և իմպերիալիստական վո՞ր պետութիւնների կողմից են նրանք ղալթված :

3. Նկարագրեցեք Հյուսիսային, Միջին և Հարավային Աֆրիկայի կլիման և բուսականութիւնը :

4. Ինչպիսի ժողովուրդներ են ապրում Աֆրիկայի գանաշան մասերում և ինչով են նրանք ղաղվում :



## Ա Մ Ե Ր Ի Կ Ա

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիկան միակ աշխարհամասն է, վորը գտնվում է Արևմտյան կիսագնդում: Տարածությամբ (42,8 միլիոն քառ. կմ.), նա կանգնած է յերկրորդ տեղում Ասիայից հետո: Նրա բնակչությունը (250 միլ.) քիչ է Ասիայի բնակչությունից 4 1/2 անգամ:


Ամերիկան ձգվել է Ատլանտյան և Խաղաղ ովկիանոսների միջև 15 հազար կմ. վրա: Ամերիկան ընդունված է բաժանել յերեք մասի, — Հյուսիսային Ամերիկա, Հարավային Ամերիկա և Կենտրոնական Ամերիկա: Ամենից նեղ մասը Կենտրոնական Ամերիկայի Պանամայի պարունցն է, վորի վրայով 1914 թվին փորված է Պանամայի ջրանցքը (յերկարությունը 81,3 կմ., լայնությունը — 91,4 մետր):

Ամերիկայի ափերը Յեվրոպայի հետ համեմատած քիչ են կտրտված: Ատլանտյան ովկիանոսը գոյացնում է միայն մի մեծ ծոց — Մեխսիկայի ծոցը, վորի հյուսիս — արեվելքում բարձրանում է Ֆլորիդա թերակղզին: Պանամայի պարանոցի և Վեստ-Ինդիացի կղզիների (վորոնց մեջ ամենամեծը Կուբան և Հայթիին են) խմբի միջև ընկած է Կարաիբյան ծովը: Հյուսիս — Արևելքում — Նյուֆաունդլենդ կղզին: (տես նկ. 10):

Հյուսիսային Մառուցյալ ովկիանոսը գոյացնում է Հուդզոնի մեծ ծոցը և Լաբրադոր թերակղզին: Մառուցյալ ովկիանոսում Ամերիկայի ափերի մոտ շատ կղզիներ կան, վորոնք կոչվում են Արկտիկական արշիպելագ և աշխարհում ամենամեծ կղզին Գրենլանդիան, վորը բացառությամբ ափերի, ծածկված է սառույցի հաստ շերտով:

Հյուսիս — արևմուտքում սառույցյալ ովկիանոսը Բերինգյան ձեղունցի միջոցով միանում է Խաղաղ ովկիանոսի հետ:

Խաղաղ ովկիանոսում Ամերիկան ունի յերկու թերակղզի — Ալյասկա և Կալիֆորնիան: Ծայր հարավում ընկած է Հրո Յերկիր կղզին, վորը բաժանված է մայր ցամաքից Մագելլանի նեղուցով:



Նկար 10. Ամերիկայի ծովերը, կղզիները, թերակղզիները և գետերը:





Նկար 11. Ամերիկայի լեռները:

Ամերիկայի ամբողջ յերկարությամբ,—  
ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ Լ Ալյասկայից մինչ Հրո Յերկիրը, ձգվում են  
բարձր լեռնաշղթաներ — Կորդիլերները:

Հարավային Ամերիկայում նրանց կոչում են Նաև անդեր,  
իսկ հյուսիսայինում՝ առանձին լեռներ կրում են տարբեր անու-  
ններ, ափի յերկարությամբ ձգվում են մերձափնյա լեռները,  
Կոսկադի և Սիերա — Նեվադան, իսկ ավելի արեւելք — Ժայ-  
ռոտ լեռներ: Նրանց միջև ընկած է մեծ Ամերիկական սարա-  
հարթը:

Կորդիլերներից դեպի արեւելք ընկած են հարթություննե-  
րը.— Հյուսիսային Ամերիկայում՝ Պերուրի սարահարթը,  
(տափաստանների բարձրավանդակ) և Միսիսիպի հարթավայրը,  
հարավայինում — Եմադոնի Լապլատայի (պարանական) հար-  
թավայրերը:

Հյուսիսային Ամերիկայի Արևելյան ծայրին մոտ անցնում են  
փոչ բարձր լեռներ Ապալաչները, Հարավային Ամերիկայի ար-  
եւելքում և Հյուսիս — արեւելքում — Բրազիլիայի, և Գվիա-  
նայի լեռնաշղթաները: (տես նկ. 11):

Մինչև 15-րդ դարի վերջը արեւելյան կիսա-  
ՍՍԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՏՆԱ-  
ԲԵՐՈՒՄԸ ՅԵՎՐՈՍԱ-  
ՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
լեռնային. կարծվում էր, փոքր Ատլանտյան  
ովկիանոսը իր մի ծայրով փոփոխվում է Յեփրոպային և Աֆրի-  
կային, մյուսով՝ Ասիային: 1492 թվին Իտալացի Գրիստափոր  
Վոլոմբոսը, հրամանատարելով իսպանական յերեք առաջատու-  
նավերի, փորձում էր Ատլանտյան ովկիանոսի միջոցով ճանապարհ  
գտնել դեպի Հնդկաստան: Նա դեմ առավ մի կղզու, փորին ըն-  
դունեց նա Հնդկաստանի և Հնդկաչխնի մոտ գտնվող այժմ Ինդո-  
նեզիա կոչվող կղիներից մեկը հետագա հետազոտությունները  
ցույց տվին, փոքր կղզումբոսի գտած հողը վերաբերվում է փոչ  
թե Ասիային, այլ այն ժամանակ անհայտ մայր ցամաքին:  
Նրան սկզբում կոչեցին Նոր աշխարհ, իսկ հետո, Ամերիկա,  
Իտալական ճանապարհորդ Ամերիգո Վեսպուչչիի անունով, փո-  
րը նկարագրել է իր գրքում այդ մայր ցամաքը: Այն կղզիները,  
փորոնց կղզումբոսը ընդունել էր Ինդոնեզիայի տեղ, կոչվեցին  
Վեստ — Ինդյան (այսինքն արևմտյան — Հնդկաստան) ի տարբե-  
րություն այժմյան Ինդոնեզիայի, փոքր կոչվում է Ուստ — Ին-  
դիան կղզիներ (այսինքն արևելյան — Հնդկաստան): Վեստ — Ին-



գլխայի կղզիներում և Ամերիկայի մայր ցամաքի վրա ապրող ժողովուրդները, կոչվեցին հնդկացիներ) և տարբերություն հընդ-  
կատանի բնակիչներից — Հնդիկներ) :

Շուտով — Ամերիկայի հայտնաբերումից հետո յեվրոպա-  
ցիները սկսեցին թալանել նրա բնակչությանը և զավթել նրա  
տերիտորիան: Ամերիկայում ստեղծվեցին իսպանիայի, փորթու-  
գալիայի և Անգլիայի գաղութներ: Այդ գաղութներում ավելի  
քան 300 տարվա ընթացքում տեղափոխվեցին շատ յեվրոպացի-  
ներ: Այդ յերկրներն մեծ մասը հասավ իր մայր յերկրից ան-  
ջատվելուն, այդպես ծագեցին ինքնուրույն հանրապետություն-  
ները:

Հյուսիսային Ամերիկայում գտնվում են —  
բԱՆԱԲԱԿԱՆ Կանադան — Բրիտանական կայսրության գո-  
բԱՐՏԵԶԸ միտն (ինքնավար տիրապետություն), Ա-  
մերիկայի Միացյալ Նահանգների հանրապետությունը և Մեքսի-  
կական հանրապետությունը:

Դրանից բացի Նյուֆաունդլենդ կղզին և Լաբադոր կղզու մի  
մասը կազմում են Դոմինիոն Նյուֆաունդլենդ: Արկտիկական  
Արշիպելագը սլատկանում է Կանադային, Գրենլանդիան՝ Դանիա-  
յին, Ալյասկան՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներին: (Տես. նկ.  
12) :

Հարավային Ամերիկայում կա 10 հանրապետություն և մի  
գաղութ Գվինան, վորը բաժանված է Անգլիայի, Հոլանդիայի և  
Ֆրանսիայի միջև: Հարավամերիկյան հանրապետություններն  
են — Բրազիլիա, Արգենտինա, Չիլի, Պարագվայ, Ուրագվայ, Բո-  
լիվիա, Պերու, Եկվադոր, Կոլումբիա և վենեսուելա:

Կենտրոնական Ամերիկայում կա վեց փոքրիկ հանրապետու-  
թյուն: Նիկարագուա, Գվատեմալ, Գոնդուրաս, Սալվադոր,  
Կատուրիկա և Պանամա, նույնպես և Ամերիկայի Միացյալ Նա-  
հանգներին սլատկանող Պանամայի ջրանցքի գոնան (չերտը) և  
Անգլիական գաղութ Բրիտանական Գոնդուրասը:

Վեստ-ինդյա կղզիներից փոքրերը բաժանված են Ան-  
գլիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի և Միացյալ Նահանգներին  
միջև, իսկ խոշորները, Կուբան, Հարթիթին, Սանտո — դոմինգո  
հանդիսանում են ձևականորեն ինքնուրույն հանրապետություններ  
(Կուբա, Հիթի, Սանտո — Դոմինգո), բայց փաստորեն ամբողջա-  
պես կախված են Միացյալ Նահանգներից:

Միացյալ Նահանգներում, Կանադայում և Նյուֆաունդլեն-  
դում տիրապետում է անգլիական լեզուն: Ամերիկայի մնացած  
մասում, Մեքսիկայից մինչև ծայր հարավ, տիրապետում է  
իսպանական լեզուն, Բրազիլիայում — փորթուգալականը: Այդ  
յերկրները կոչվում են Լատինական Ամերիկա, այնպես ինչպես  
իսպանական և փորթուգալական լեզուները (ինչպես և իտալա-  
կան, ֆրանսիական և Ռումինական լեզուները) ծագում են հնա-  
գայան լատինական լեզվից:

Ամերիկական յերկրներից՝ Միացյալ Նահանգները — խոշոր  
իմպերիալիստական տերություն է, Կանադան և Նյուֆաունդ-  
լենդը — Դոմինիոններ, իսկ լատինական Ամերիկայի բոլոր հան-  
րապետությունները, նույնիսկ ամենախոշորները — Բրազիլիան և  
Արգենտինան — փաստորեն կախյալ յերկրներ են: Նրանց մեջ  
իշխում են Անգլիայի, Միացյալ Նահանգների կապիտալիստները,  
մրցելով իրար հետ, իսկ վերջին ժամանակներս ձգտում են իրենց  
ադրեցությունն ուժեղացնել Փաշիստական յերկրներ — Գեր-  
մանիան, Իտալիան և Ճապոնիան:

1. Ինչպիսի ուղիղանուններ, ծովեր և ծոցեր  
ԱՏՈՒԳԻՁ ՀԱՐՑԵՐ են վորողում Ամերիկային՝ Հյուսիսից, արևել-  
ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ քից և Արևմուտքից:

Այդ ուղիղանուններում ու ծովերում Ամերիկայի ափերին մոտ  
ինչ թերակղզիներ կան:

2. Ինչպիսի լեռներ, հարթավայրեր և բարձրավանդակներ  
կան, Հյուսիսային և ինչպիսիք — հարավային Ամերիկայում:

3. Յեվրոպացիները ինչպես և յերբ իմացան Ամերիկայի  
գոյության մասին:

4. Ինչ յերկրներ են գտնվում Հյուսիսային, Միջին և Հարա-  
վային Ամերիկայում:

5. Վոր յերկրների խումբն է կոչվում Լատինական Ամերիկա  
և ինչու:

## Կ Ա Ն Ա Դ Ա

Տարածությունը՝ 9,5 միլ. քառ. կմ. բնակչությունը՝ 11

միլ., կենտրոն Ուտտավա:

ԲՆԱԿԱՆ Կանադայի արևմուտքում Հյուսիսից դեպի  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ հարավ ձգվում են Կորդիլերների զուգահեռ լեռ-  
ներ — Մեքսիկյան և ժայռոտ լեռները: Նրանցից դեպի արևելք  
փոխվում են հեկայական բարձրացած հարթություններ — Պերիի







կացիներ և Եսկիմոսներ են, վորոնք վոչնչացան նշանակալի մասով և աթմ շատ փոքրաթիվ են (130 հազար) :

Բնակչության քանակը (11 միլ.) այդպիսի մեծ յերկրի համար մեծ չէ : Այդ բնակչությունը դասավորված է անհամաչափորեն, ամենից խիտ է Լավրենտիա դետի հովտում և մեծ Լճերի մոտ :

Կանադան վորպես դոմինիոն մտնում է Բրիտանական կայսրության կազմի մեջ : Նա ունի իր պառլամենտը և իր կառավարությունը, վորը գտնվում է Կանադայի բուրժուազիայի ձեռքում, և իր բանակը :

Մեծ աղբյուրություն ունի Կանադայում նրա հարավային հարևանը — Ամերիկայի Միացյալ Նահանգները, վորոնք մրցում են Անգլիայի հետ Կանադայի տնտեսության մեջ գերակշռություն չահելու համար :

Կանադայում զարգացած է գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը : Հողագործությունը վարվում է խոշոր կապիտալիստական տնտեսությունների միջոցով, վորոնք ողովում են վարձու բանվորներով և թանկ մեքենաներով — արակտորներով և կոմբայներով : Պրերիաներում — գտնվում է ցորենի արտադրության աշխարհի խոշորագույն չրջաններից մեկը : Կանադան ցորենը արտահանում է արտասահման :

Շատ զարգացած է անասնաբուծությունը . Մեծ լճերի անտառոտ չրջանում և Լավրենտիա դետի մոտ է կաթնալին, տնտեսությունը Պրերիաներում — մսինը : Միսը, յուղը և կաթը կոնսերվայի տուփերի մեջ ուղարկում են արտասահման :

Տաջգայում զարգացած է փայտամթերումը և մորթավոր գազանների վորսը, ովկիանոսային ափերին, լճերում և դետերում — ձկնորսությունը : Արդյունաբերությունը գերազանցապես կենտրոնացած է Լավրենտիա դետի յերկարությամբ : Կանադայում արտադրում են ավտոմոբիլներ, գյուղատնտեսական մեքենաներ, անտառանյութ և թուղթ, հանում են հանածոներ :

Կանադայի գլխավոր քաղաքներն են . Մոնրեյալ (մեկ միլիոն բնակչությամբ) և Տորոնտոն : Դրանք յերկուսն ել խոշորագույն արդյունաբերական կենտրոններ են Լավրենտիա դետի վրա : Ոտուսվան — Կանադայի մայրաքաղաքը հենց նույն դետի վրա : Կոբլենի չրջանի և ալյուրի արդյունաբերության կենտրոնն է Վիննիպեգ :


Նավահանգիստները Ատլանտյան ափին՝ Գալիֆակսը, խաղաղ — ովկիանոսյան ափին Վանկուվեր : (Տես . նկ . 12) :

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (ԱՄՆ)

Տարածությունը՝ 7,8 միլ. քառ. կմ. բնակչությունը 128 միլ., մայրաքաղաքը՝ Վաշինգտոն :

Հյուսիսային Ամերիկայի միջին մասը, Կանադայի և Մեքսիկայի միջև, զբաղեցնում են Ամերիկայի Միացյալ Նահանգները (կրճատ — ԱՄՆ) :

Տերիտորիայով նրանք զիջում են Կանադային, բայց բնակչությամբ գերազանցում են զրեթե 12 անգամ : Իր տերիտորիայով ԱՄՆ-ը համարյա յերկու անգամ մեծ է Յեվրոպայի բոլոր կա-



Նկար 13. ԱՄՆ-ի աշխարհագրական դիրքը, աշխարհի քարտեզի վրա սևով ցույց են տրված ԱՄՆ-ը և նրանց գաղութները :

պիտալիստական յերկրներից — միասին վերցրած : ԱՄՆ-ը կապիտալիստական պետությունների մեջ իր տնտեսությամբ գիգանտ է հանդիսանում :


ԱՄՆ-ը վողողում է Արևմուտքից՝ իսպաղ, արևելքից՝ Ատլանտյան ովկիանոսներով և հարավից՝ Մեքսիկայի ծոցով : Հարավ — արևելքում բարձրանում է Ֆլորիդա քերակափին :

Մակերեսով իր յերկու մասերը խիտ կերպով տարբերվում են իրարից :

Ատլանտյան ովկիանոսի մերձափնյա նեղ յերրը տափարակ է (Մեքսիկա — Ատլանտյան օվկիանոս) : Արևմուտքից նրան սահմանափակում են Ապալչի վոչ բարձր (մեկ ու կես — յերկու կիլոմետր) լեռները, վորոնք ծածկված են անտառով : Այնուհետև, ԱՄՆ-ի ամբողջ միջին մասը



(Կանադական սահմանից մինչև Մեքսիկայի ծոցը) բռնում է կենտրոնական վիթխարի հարթությունը: Ծովի մակերևույթից նրա բարձրությունը հավասար է 300 մետրի, բայց Մեծ լճերից դեպի հարավ, Միսսիսիպի գետի հոսանքի ուղղությամբ, այն



Նկար 14. Չսառչելու ժամանակաշրջանի տեղադրությունը ԱՄՆ-ում.

ցածրանում է և վեր ածվում հարթավայրի (Միսսիսիպի հարթավայր): Այնուհետև կենտրոնական հարթությունը բարձրանում է 600—700 մետրի և վեր է ածվում Պերրերի սարահարթի (տափաստանների սարահարթը):

ԱՄՆ-ի հարավային մասը, վերտեղ չսառչելու ժամանակաշրջանը 7 ամսից ավելի չէ և առատ են մթնոլորտային տեղումները (տե՛ս, նկ. 15), ունի աշխարհում ամենաբարեկամատ պայմանները բամբակի համար: Ավելի հյուսիս, այն շրջանում վերտեղ չսառչելու ժամանակաշրջանը 5—7 ամիս է տևում, հիմնական կուլտուրան և յեփպտացորենը (մախ): Ֆլորիդան և իսպաղովիանոյան հարավային ավերք մերձարևադարձային մրգերի շրջաններ են:

Մերձ առլանտյան հարթավայրը, կենտրոնական հարթությունը Պերրերի սարահարթը (պլատո) ընկած են բարեխառն

գոտու յենթաարեվադարձային շերտում: Նյու—Յորք քաղաքի աշխարհադրական լայնությունը (Ատլանտյան ափից հյուսիս, 42 աստ. հյուսիսային լայնություն), այնպես է, ինչպես հարավային Իտալիայինը կամ մեր Անդերկովկասինը: Մեքսիկական ծոցի ափն ունի նույն լայնությունը, ինչ Մարոկկոն, Յեդիստոսը, Աբարիայի կամ Հնդկաստանի հյուսիսը: Սակայն սառուցյալ ովկիանոսի սառը քամիները, վորոնք արգելքի չեն հանդիպում լեռնֆի կողմից, ձմեռը ցուրտ են դարձնում: Այդ ցրտությունը հարավին հասնում է սակավ և ավելի թույլ կերպով, դրա համար ել այնտեղ յենթաարեվադարձային տիպիկ ձմեռ է լինում: Հարավը և հարավ—արեվելքը զտնվում են դեռ Գոլֆֆտրոմի տաք հոսանքի ազդեցության տակ, վորը սկսվում է Մեքսիկական ծոցում և ծովում Ֆլորիդայի մոտ:

Ովկիանոսի ջրի ուժեղ գոլջիացման հետևանքով հարավում տեղումներ լինում են մեծ քանակությամբ: Ջերմությունը և խոնավությունը հնարավորություն է տալիս հարավում մշակել բամբակ, չաքարեղեղ, Ֆլորիդայում—նարինջ և լիմոն:

Ավելի հյուսիսում տեղումները քիչ են: Կենտրոնական հարթության արևմուտքում տեղումներն ավելի քչանում են և սկսվում է կիսաչորային շերտը: Ատլանտյան ովկիանոսից և Մեքսիկական ծոցից յեկող քամիները, վորոնք տեղումներ են բերում, վոչ միչտ են հասնում այստեղ: Ավելի արևմուտք, Պերրերի սարահարթում, սկսվում է չորային շրջանը:

ԱՄՆ-ի արևմտյան մասը զբաղված է կոր—ԱՄՆ-ի ԱՐԵՎԱՏՏԱՆ ղելերներով: Պերրերի սարահարթի ծայրի ՍԱՍԻ ԲԱՍԿԱՆ մոտով անցնում է կորդիլերների վիթխարի ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և բարձր՝ ժայռոտ լեռները: Խաղաղ ովկիանոսի մոտի ափի մոտ անցնում են Սիերա—Նեվադան և

Կասկադի լեռները:


Ժայռոտ լեռների միջև, մի կողմից, Կասկադի և Սիերա—Նեվադայի՝ մյուս կողմից, ընկած է Մեծ ամերիկական տարահարթը:

Այնքան վորքան լեռնային բարերները պահում են խաղաղ և Ատլանտյան ովկիանոսերից յեկող քամիներն ու տեղումները, Մեծ սարահարթը—կիսաանապատային, իսկ տեղ—տեղ իսկական անապատ է ցամաքային կլիմայով: Մարալանջերը, վորոնք ուղղված են դեպի բարձրավանդակ, քարքարոտ և անկյանք են:



Լեռների վերին լանջերը պատած են հավիտենական ձյունով: Այն հալչելու հետևանքով առաջանում են լեռնային գետեր: Դրանցից մի քանիսը սարահարթերում քանդել են խոր ձորեր—կանյոններ: Այդ գետերից ամենախոշորն է—Մոլորադոն: ԱՄՆ-ի արևմուտքի գետերը աննավարկելի յեն, բայց կարող են ոգտագործվել վոռոգման համար և ելեկտրական էներգիայի մշակման համար:

Խաղաղ ովկիանոսյան ափի հյուսիսային մասի կլիման ծովային և խոնավ է: Կասկածի լեռների արևմտյան լանջերը ծածկված են փարթամ անտառներով: Նրանց մեջ հանդիպում են վիթխարի հաստությամբ ծառեր:




Նկար 15. Մթնոլորտային տեղումների քանակը ԱՄՆ-ում:

Ամենից ավելի մթնոլորտային տեղումներ ունեցող շրջանում մշակում են բամբակ—հարավում, յեգիպտացորեն—միջին գոտում, կիսաչորային շրջաններ Եյուտիային կիսում—ցորենի (աշնանացան) երևակալան շրջանը: Ձորային շրջանները—արևմտյան անառնապահույթյուն և արհեստական վառոգման հիման վրա ռազիսային հողագործությամբ շրջան են:

Խաղաղովկիանոսյան ափի հարավային մասում (Կալիֆորնիայում) կլիման հիշեցնում է Միջերկրածովային,—տաք,

անձրևոտ ձմեռ և չոր, ալյուղ ամառ: Այստեղ աճում են նուրիշ, լիմոն, դեղձ, թուզ:

ԱՄՆ-ը ունի հանածոների վիթխարի հարստություն: ԱՄՆ-ում և յերկրագնդի քարածխի ամենախոշոր պաշարները, վորոնք գտնվում են յերեք ափագաններում՝ Ապալչյան լեռների յերկտրությամբ, Միսսիսպիի յերկու կողմերում և Ժայռոտ լեռների հյուսիսում: Ցերկաթի պաշարները կենտրոնացված են Վերին լճի մոտ և Ապալչների հարավում: Պղնձի, ցինկի, արծճի, վոսկու մեծ պաշարներ են փոխած Կորդիերների և Մեծ սարահարթի զանազան տեղերում: Խոշոր, բայց ուժեղ հանման պատճառով արագորեն սպառվող նավթի պաշարներ են գտնվում Մեկսիկական ծոցի ափին և նրանից դեպի հյուսիս, նույնպես և Խաղաղովկիանոսյան ափի հարավում:



Նկար 16. Ածուխի և յերկաթի հանքատեղերը ԱՄՆ-ում:

Միացյալ Նահանգների 128 միլիոն բնակչությունից հիմնական բնակիչները—հնդկացիները, կազմում են միայն 330 հազար: Բնակչության ամբողջ քառասուն մյուս աշխարհամասերից ղրխավորապես Ցեմբրոպայից յեկած վերաբնակիչներ են:

17-րդ դարում Հյուսիսային Ամերիկայի Սալանոյան ափում կազմակերպվեցին Անգլիական մի քանի բնակավայրեր:



18-րդ դարի վերջին այդ բնակավայրերը, վորտեղ հաշվվում էին արդեն 4 միլիոն բնակիչներ, հայտարարեցին իրենց Անգլիայից անկախ պետություններ (նահանգներ), համախմբվելով մի ֆեդերացիայի (միության) մեջ, Այտաեդից ել նրանց անվանումը՝ Սիացյալ Նահանգները՝ Վերաբնակիչները, շարունակելով գալ Մեծ Բրիտանիայից, շարժվեցին Ապալաչներեց դեպի արևմուտք, կոտորելով բուն հնդկական բնակչությունը և վարելով հողը ԱՄՆ-ի հարավում, վորտեղ հիմնավորվեցին անգլիայից յեկած աղնվական-կալվածատերերը, բանվորական ձեռք չկար, և կալվածատերերը սկսեցին գնել ճորտեր՝ նեգրերի, վորոնց առևտրականները բերեցին նավերի վրա՝ Աֆրիկայից:

19 և 20-րդ դարերում, ընդհուպ մինչև 1914—1918 թվերի պատերազմը, շարունակվեց դադթականների ուժեղ հոսանքը ԱՄՆ, ընդվորում արդեն վոչ միայն Անգլիայից, այլև նույնպես Գերմանիայից, Ավստրո-Վենգրիայից, Սկանդինավյան յերկրներից, Ռուսաստանից, Իտալիայից, Բալկանյան յերկրներից, Չինաստանից և Ճապոնիայից: Պատերազմից հետո վերաբնակեցումը (իմմիգրացիան) ԱՄՆ սահմանափակվեց, իսկ վերջին տարիներում բոլորովին արգելվեց:

ԱՄՆ-ի ազգային կազմը շատ բազմաբղետ է: Նրա հիմնական կորիզը Մեծ Բրիտանիայից յեկած վերաբնակիչներ են: Պետական լեզուն հանդիսանում է անգլիականը:

Հարկավոր է հատուկ նշել նեգրերի և հնդկացիների դրությունը: Հնդկացիները կոտորվեցին, կամ քչվեցին անապատային հողերը, վորտեղ նրանք մեռնում են: Նեգրերը ԱՄՆ-ում հաշվում են 13 միլիոն, կամ ամբողջ բնակչության 1/10-ը: Ապրում են նրանք գերազանցապես հարավում: 1865 թվականից ճորտությունը ԱՄՆ-ում վերացված է, և ձեվականորեն նեգրերը հաշվվում են ազատ և իրավահավասար, բայց իրականում նրանք և այժմ կիսաճորտային վիճակում են: Նեգրերին թույլ չեն տալիս նույնիսկ սպիտակների հետ միասին լինել հյուրանոցներում, ճաշարաններում, թատրոններում, գնացքներում, տրամվայներում, նրանց համար հատկացվում է առանձին տեղեր: Շատ հաճախակի յեն ամբոխի վայրենի ինքնադատաստանի դեպքերը՝ (այսպես կոչված «Լինչի դատարանը») նեգրերի նկատմամբ: Նեգր-բանվորները ստանում են ավելի քիչ աշխատավարձ, քան սպիտակները: Նեգրերի մեծ մասը հողագործներ են, բայց նրանք հող չունեն և հողակտորներ են վարձակալում կալվածատերերից՝ կապալային պայմաններով (բերքի 1/2—2/3 մասը):


Ամբողջ ինքնագործ բնակչության մոտ 4/5-ը (այսինքն ինչ նուրբոյն յեկամուտ ունեցող)՝ բանվորներ և ծառայողներ են:

Բուրժուազիայի մեջ կան մարկանց մի վոչ մեծ խումբ, վորը տիրապետում է վերթխարի կապիտալներին, վորոնք միլիարդներով են հաշվվում:

Քաղաքներում ապրույթ են բնակչության կեսից ավելին: Ամենից ավելի խիտ է բնակեցված հյուսիս-արևելքը և լճերի շրջանը, ամենից նոսր՝ Մեծ սարահարթում:

ՊԵՏԱԿԱՆ  
ԿԱՐԳԸ

Սիացյալ Նահանգները բուրժուազեմոկրատական ֆեդերատիվ հանրապետություն է Նա բաղկացած է 48 իքնավար նահանգներից: Ամբողջ Ֆեդերացիայի գերագույն մարմինն է Կոնգրեսը (պառլամենտ), պրեզիդենտը և Գերագույն դատարանը: Կոնգրեսը բաղկացած է բնակչության համաչափ ջանակությամբ՝ յուրաքանչյուր նահանգում և սենատից, վորի անդամները ընտրվում են յերկաս-



Նկար 17. Նավթահանքերը և նավթատար խողովակները ԱՄՆ-ում

տիճան ընտրությամբ՝ ամեն նահանգում յերկու հողի: Կոնգրեսը չբաղվում է որենքների հրատարակումով: Պետական գործերը կառավարում է հանրապետության պրեզիդենտը (նախագահը), վորը միանձնաբար նշանակում և հանում է մինիստրներին:

Պրեզիդենտը ընտրվում է յերկաստիճան ընտրություններով 4 տարի ժամկետով:

Գերագույն դատարանը բաղկացած է 9 դատավորներից, վորոնք ցմահ նշանակված են պրեզիդենտի կողմից: Այդ դատարանը իրավունք ունի վերացնելու կոնգրեսի կամ պրեզիդենտի կողմից կայացած ամեն մի վորոշումը, յեթե գտնում է, վոր այն հակասում է Սահմանադրությանը: Հետադիմական դա-



տարանները խոշոր կապիտալիստների թեկադրանքով չտրաշահում են այդ իրավունքը:

Յուրաքանչյուր նահանգ ունի իր պառլամենտն և իր ընտրովի նահանգապետը:

Բուրժուական կուսակցություններից դիտվոր դեռ են խաղում յերկուսը—դեմոկրատականը և հանրապետականը:

Վերջին տարիները ուժեղ կերպով աճեցին (10 անգամ) ԱՄՆ-ի կոմունիստական կուսակցությունը և կոմսոմոլը:

Խոշոր կապիտալի և նրա ֆաշիստական գործակալության դեմ մղած իր պայքարով ԱՄՆ-ի կոմկուսակցությունը ձեռք բերեց մեծ ազդեցություն ազգաբնակչության վրա—հակաֆաշիստական լիզան հաղվում է 5 միլիոն անդամ, հեղափոխական պրոֆմիությունների միավորումում 4 միլիոն:

1938 թվին ի պատտության ռեակցիոնիստների (խոշոր կապիտալի շրջապատի կատարի հարձակմանը ընդդեմ պրեզիդենտ Ռուզվելտի առաջադրման ձեռնարկումները, ԱՄՆ-ի, Կոմկուսակցությունն իր կենդրոնական խնդրը հայտարարեց հասնել ամբողջ դեմոկրատական լազերի խոշոր միաձուլությանը և մոբիլիզացիային՝ ԱՄՆ-ի աշխատավորության դրուժյան լավացման, ֆաշիզմին հակահարված տալու և ընդհանուր խաղաղության համար պայքարի նպատակով:

Միացյալ Նահանգները ունեն բարձր զարգացած արդյունաբերություն և աշխարհի

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՄՆ-ին բաժին է ընկնում չուգունի, գյուղատնտեսություն: ԱՄՆ-ին բաժին է ընկնում մոտ պողպատի, գործվածքների համաշխարհային արտադրանքի մոտ կեսը, մեքենաների համաշխարհային արտադրանքի 60 տոկոսը, ավտոմոբիլների համաշխարհային բաց թողնման 80 տոկոսը, նավթի համաշխարհային հանույթի մոտ 70 տոկոսը: Գյուղատնտեսության բնագավառում ԱՄՆ-ի բաժինն հասնում է համաշխարհային բամբակահավաքման և յեղիպտացորենի մոտ կեսը: Վոսկու համաշխարհային պաշարի կեսից ավելին կենտրոնացված է ԱՄՆ-ում:

Ահա թե ինչու, ինչպես մատնացույց արավ Համկ(բ)Կ 16-րդ համագումարում ընկ. Ստալինը, ԱՄՆ-ը հանդիսանում է կապիտալիզմի գլխավոր յերկիրը, նրա ցիտադելը (ցիտադել—ամրոց): ԱՄՆ-ի կապիտալիստները ավելի, քան մյուս յերկրներինը միացված են տրեստներում և կոնցերններում: Ֆարքիսները և գործարանները տեխնիկայի բարձր մակարդակ ունեն: Լայնորեն գոծադրվում է երկտրակաճությունը:

ԱՄՆ-ի արդյունաբերության վիթխարի մասշտաբներին համապատասխանում է և գործադրկություն չափերը, գործազուրկների թիվը, չհաղված նրանց ընտանիքները, 1938 թվին հաղմում է 12—13 միլիոն մարդ:

ԱՄՆ-ի գյուղատնտեսության մեջ լայնորեն գործադրվում են մեքենաներ և վարձու բանվորների չահագործումը: Խոշոր ֆերմաները—դրանք կապիտալիստական գյուղական տերեր են, սակայն, տրակտորներ ունեն միայն բոլոր ֆերմերների 1/7 մասը: Ամեն տարի շատ մանր ֆերմերներ քայքայվում են և անցնում բանվորների շարքերը: Հարավում գերակշռում է նեգրերի հողագործական մանր տնտեսությունները, վորոնք կարալային պայմաններով վարձակալել են հողը, բերքի մինչև 2/3-ը նրանք վճարում են կալվածատիրոջը: Այդ տնտեսություններում հեռամանց է տեխնիկան:

1929—1934 թվերի համաշխարհային տնտեսական ճգնաժամը ԱՄՆ-ի վողջ տնտեսությանն այնպես ուժեղ ցնցեց, վոր այն մինչև այսօր ել դեռ լիովին չի շտկվել նրա հարվածից: 1937—1938 թվ. ԱՄՆ-ում նորից ծավալվեց նոր տնտեսական ճգնաժամը: Ծանր արդյունաբերության արտադրանքը կրճատվեց ավելի քան յերկու անգամ, գործազուրկների թիվը մեկ տարում ավելացավ 5—6 միլ. մարդով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՄՆ-ի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը յերկրի տերիտորիայի վրա շատ անհամաչափ են դասավորված: Եկոնոմիկայի տեսակետից ամբողջ յերկիրը կարելի յե բաժանել յերեք մասի. 1) Արդյունաբերական Հյուսիս, 2) Նախկին ճորտատիրական Հարավ և 3) Գաղութացվող Արևմուտք:

1. Արդյունաբերական Հյուսիսը բռնում է մերձառլանտական հարթավայրի Ապալաչների, կենտրոնական դաշտավայրի և պրեյրիերի տարահարթի Հյուսիսային մասը:

Այստեղ կենտրոնացված է գործարանների և ֆարրիկաների հիմնական մասսան, այստեղ է քաղաքների մեծ մասը, այստեղ է յերկաթուղիների ամենախիտ ցանցը: Այստեղ է և ամենազարգացած գյուղատնտեսությունը,— յեղիպտացորենի, ցորենի ցանքերը և անասնապահությունը:

Հյուսիսի քաղաքներից ամենից առաջ հարկավոր է նշել Ատլանտական ափին գտնվող Նյու-Յորքը, վորն աշխարհի ամենամեծ քաղաքն է (ծայրամասերով մոտ 10 միլ. բնակիչներ) և համաշխարհային նավահանգիստ: (Փաղաքները նայեցեք քարտեզի վրա էջ՝ 60):

ԱՄ-ի քաղաքներում և առանձնապես Նյու-Յորքում շատ են բարձր տները—«յերկնաքերները», վորոնք ունեն 20 մինչև 50 և նախնի շատ հորկեր



Այդպիսի յերկնաքեր տներում սպառում կամ աշխատում են 10-15 հազար մարդ: Նյու-Յորքի փողոցները բռնված են դանդաղորեն շարժվող ավտոմոբիլներով:

Շարժումն արագացնելու համար կառուցված են ստորերկրյա (մետրո) և վերերկրյա յերկաթուղիներ, վորոնց գնացքները անցնում են յերկրորդ և յերրորդ հարկերի յուսամուտներին հավասար բարձրությամբ:

Ատլանտյան ամերիկն կան ևս յերկու մեծ քաղաքներ մեկական միլիոն բնակչությամբ. Նյու-Յորքից հյուսիս) — Բոստոնը, տեքստիլ (բրդի և բամբակեղենի) և կաշվեկոշիկեղենի արդյունաբերության կենտրոնը և Նյու-Յորքից հարավ — Ֆիլադելֆիան՝ շոգեքարերի շինարարության և նավաշինարարության կենտրոնը:

Ավելի արևմուտքում, Ապալաչների յետևում, ածխի ավազանում, բնկած և Պիտտսբուրգը, մետաղագործության և քարածխի հանույթի կենտրոնը:

Յերեք խոշոր քաղաքներ դասավորված են Մեծ լճերի հարավային ամերիկ մոտ: Չիկագո (3 1/2 միլ. բնակիչներով) Մեչիգան լճի մոտ, Մսի արդյունաբերության (Չիկագոյի նշանավոր սպանդանոցները, վորոնք ամբողջությամբ մեքենայացված և երեկտրականացված են, մորթում են տարեկան մինչև 20 միլ. գլուխ անասուն), մետաղագործության և գյուղատնտեսական մեքենաների արտադրության կենտրոն, Դետրոյտը — Պորդի հայտնի ավտոմոբիլային գործարաններով և Կլիվլենդը՝ երկ լճի մոտ — մեքենաշինական գործարաններով:

2. Նախկին ճորտատիրական Հարավ, բռնում և Ապլաչների Ատլանտյան ամի կենտրոնական դաշտավայրի և Պրերիերի տարահարթի հարավային մասը՝ այստեղ կենտրոնացված նեգրական բնակչությունը և պահպանվում են ճորտատիրության մնացորդները:

Հարավում գերակշռում և գյուղատնտեսությունը, այն ել հետամնաց, մանր վարձակալները, վորոնք հյուսիսի կապիտալիստական ֆերմերների նման չեն կարող մեքենաներ գնել և բատրակներ վարձել: Հարավում գերակշռում և հիմնականում բամբակ, խնչպես և յեգիպտացորեն, ծխախոտ, չաքարեղեգ, տեղտեղ ել բրինձ, Ֆլորիդայում — նարինջ և լիմոն:

Արդյունաբերությունը հարավում թույլ և դարգացած: Գե-

րակշռում են տեքստիլ (բամբակեղենի) և նավթի արդյունաբերությունը:

Քաղաքներն այստեղ քիչ են, քան հյուսիսում, այնպիսի խոշորները, ինչպիսիք կան հյուսիսում, այստեղ չկան: Հարավի քաղաքներից հարկավոր և նշել ԱՄՆ-ի մայրաքաղաք Վաշինգտոնը՝ Ատլանտյան ամիկն, Մեքսիկական ծոցի վրա նավահանգիստ Նյու-Որլեանը: և Ապալաչների հարավում ածխի հանույթի և մետաղագործության կենտրոն Բիրմինգհամը:

3. Գաղութացված արևմուտքը, վորը բռնում և ապառաժոտ յեռներից մինչև Սաղաղ ովկիանոսը: Դա մի չըջան և, վորը գետ լիովին բնակեցված չեն: Նրա բնակեցումը պահանջում և վորտգողական մեծ աշխատանքի կատարում: Իսկ այդ խնդիրը լիովին իրականացել չի կարող կապիտալիզմի ուրոք: Լեռներում և բարձրավանդակներում դարգացած և վոսկու, պղնձի, ցինկի, նավթի և այլնի հանույթը: Սաղաղովկիանոսյան ամի հյուսիսում անտառային տնտեսություն և, հարավում (Կալիֆորնիայում) պողաբուծությունը, նույնպես և վոսկու ու նավթի հանույթը:

Կալիֆորնիայի գլխավոր քաղաքներն են՝ Սան — Ֆրանցիսկոն և Լոս — Անջելոսը — (յուրաքանչյուրում մեկ միլիոնից ավելի բնակիչներ):

ԳԱՂՈՒԹՆԵՐԸ

Միացյալ Նահանգները Ամերիկայից հյուսիս — արևմուտքում տիրապետում են մի տեծ տերիտորիայի — Ալյասկային, վորը գնված և 1876 թ. ցարական Ռուսաստանից, Պանամայի ջրանցքի ղոնային (չերտին), Վեստ — ինդյան կղզիների մի մասը՝ Կարաիբյան ծովում, փաստորեն Կուբային և Հայիթին, մի շարք կղզիների՝ խաղաղ ովկյանոսում, վորոնցից կարևորագույններն են Ֆիլիպինյան (ասիայի ամերիկն մոտ) և Գուայի կղզիները: Աֆրիկայում ԱՄՆ-ի փաստական դաղութն և հանդիսանում ձևականորեն ինքնուրույն հանրապետություն — Լիբերիան:

ԱՄՆ-ը իշխում և նույնպես Հարավ — ամերիկական մի շարք յերկրներում (Պերու, Վինեցուերա, Եկվադոր, Կոլումբիա և այլն) և պայքարում և Անգլիայի դեմ Բրազիլիայում, Արգենտինայում, Չիլիում, նույնպես և Կանադայում տիրապետություն ձեռք բերելու համար: «Ամերիկան ամերիկացիների համար» — ԱՄՆ-ի իմ-



պերիալիստները լողունքն է: ԱՄՆ-ի կապիտալը լայնորեն թափանցում է Ասիա և Յեմբուգա:

Վերջին ժամանակները ավելի ու ավելի են սրվում իմպերալիստական հակասութունները ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև, նույնպես և աճում են հակասութունները ԱՄՆ-ի և Փաշխտական պետությունների՝ Գերմանիայի ու Իտալիայի միջև: Ճապոնիան դուրս է վանում Ամերիկական կապիտալը Չինաստանից, թափանցում է Ֆիլիպյան և Գալաթի կղզիները և նույնիսկ ԱՄՆ-ի խաղաղ— ուկիանոսյան ափերը, վորտեղ հիմնադրվեցին ճապոնական շատ վերաբնակիչներ: Գերմանիան և Իտալիան ձգտում են յենթարկել իրենց ազդեցությունը Լատինական Ամերիկայի առանձին հանրապետությունները, դավթել այնտեղից սպառման շուկաները և հումքի աղբյուրները ու դուրս մղել ամերիկացիներին և անգլիացիներին: Միաժամանակ լայնորեն ծավալվեց ճապոնիայի և Գերմանիայի լրտեսությունը ԱՄՆ-ի տիրապետություններում, հատկապես ստրատեգիական տեսակետից՝ կարևոր կետերում (ինչպես որինակ Պանամայի ջրանցքի գոնայում, Սան— Ֆրանցիսկոյում, Ֆիլիպպիններում):

## ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՅԵՐԿԻՆԵՐԸ

### Մ Ե Ք Ս Ի Կ Ա

—Տարածությունը 1,9 միլ. քառ.

կմ., բնակչությունը 19—միլ— մայրաքաղաքը Մեխիկո:

Մեքսիկան ընկած է ԱՄՆ-ից դեպի հարավ: Նրա արևմուտքում, ինչպիսիք ուկիանոսն են ներս ընկնում Կալիֆորնիա թերակղզին, Հարավ— արևելքում, Մեքսիկական ծոցի և Կարաիբյան ծովի միջև բարձրանում է Յուկատան թերակղզին:

Յերկրի մեծ մասը բնակած է բարձր մեքսիկական բարձրավանդակով, Արևելքից և Արևմուտքից այն չբնակառված է յերկու— հարավում միացվող Կորդիլերյան լեռնաշղթայով, վորոնց միջին բարձրությունն է 3,5 կմ.: Մեքսիկայի սարերում շատ են գործող հրաբուխները:

Մեքսիկայի հարավային կեսը ընկած է արևադարձային, դոտում, Հյուսիսային— բարեխառն գոտու յենթաարևադարձային գոնայում: Սահայն չորհիվ ծովի մակերևույթից յերկրի բախակամաչափ բարձր լինելուն չող բարեխառն է: Ափերին մոտ, և

առանձնապես արևելյան ափին— տեղումները շատ առատ են լինում (մինչև 2,7 մետր): Այստեղ կա արևադարձային և յենթա— արևադարձային հարուստ բուսականություն: Մեքսիկական բարձրավանդակի ներսի մասը չոր կիսաանապատ է՝ սակավ փշոտ բուսականությամբ:

Մեքսիկան շատ հարուստ է հանածոներով, — նավթով, արծաթով, վոսկով, պղնձով, արձնով, ցինկով և այլն:

Մեքսիկայի բնակչությունը  $7/10$  կազմված է հնդկացիներից և մետիսներից (վորոնք ծնվել են հնդկացիների սպիտակների հետ ամուսնությունից): Մնացածը կրեոլներ են (Իսպանացիների նախնիները, վորոնք վերաբնակվել են այստեղ մի քանի դար առաջ) և Յեմբուգյաններ: Տիրապետող լեզուն իսպանականն է:

Մեքսիկան բուրժուական Ֆեդերատիվ հանրապետություն է: Նրա տնտեսության մեջ մեծ դեր է խաղում արտասահմանյան կապիտալը (ԱՄՆ և Անգլիա): Հեղափոխական պայքարը Իսպանիայում՝ արձագանք գտավ Մեքսիկայում, այնտեղ լայնորեն ծավալվեց ժողովրդական ֆրոնտի շարժումը:

Մեքսիկայի տնտեսությունը հետամնաց է: Արդյունաբերությունը զլխավորապես հանույթային է (հատկապես նավթի, արծաթի, վոսկու հանույթը): Հողագործական կարևորագույն կուլտուրան յեգիպտացորենն է, վորից հաց են պատրաստում: Տեղտեղ մշակում են նույնպես ցորեն, կարտոֆել, բանան, նարինջ, չաքարեղեղ, սուրճ, ծխախոտ, բամբակ: Հողը պատկանում է խոշոր կախվածատերերին (մասամբ ել ոտարերկրյա) և մշակում է կամ գյուղացի— վարձակալներին և կամ բատրակների միջոցով: Ոտարերկրյա կապիտալին է պատկանում լեռնարդյունաբերական ձեռնարկությունները՝ ելկտրոկայանները, տրանսպորտը և բանկերը:

### Բ Ի Ա Ջ Ի Լ Ի Ա

Տարածությունը 8,5 միլ. քառ. կմ.: Բնակչությունը 45 միլ. մայրաքաղաքը Ռիո—ժան Եյեթո:

Բրեզիլյան յերկրագնդի խոշորագույն յերկրներից մեկն է. նա բռնում է հարավային Ամերիկայի համարյա թե կեսը և տարածությունը գերազանցում է ԱՄՆ-ին: Իր բնական պայմաններով Բրազիլիան բաժանվում է յերկու մասի. Ամազոնի հարթավայրը և Բրազիլիայի լեռնաշխարհը:

Ամազոնի հարթավայրը բռնում է Բրազիլիայի հյուսիսային



մասը, վերը ընկած և արևադարձային գոտում, հասարակածի շերտում: Ամազոնի հարթավայրը ունի շատ խոնավ տաք կլիմա և ծածկված և արևադարձային փարթամ անտառներով: Ծառերի մեջ կան թանգարժեք տեսակներ, առանձնապես կաուչուկատու:

Ամազոնի հարթավայրով անցնում և աշխարհի ամենաջրառատ գետը—Ամազոնկան: Այդ գետը սկսվում է Անդերում և թափվում է Ատլանտյան օվկիանոսը, յերկարություն ունենալով մոտ 6 հազար կիլոմետր: Նա ընդունում է մի շարք շատ խոշոր (Նրանցից գլխավորը—Մադեյրան) և բազմաթիվ մանր վտակներ: Ամազոնկայի լայնությունը հոսանքի վերին մասում 11½ կիլոմետր է, ներքևի մասում 5 կմ. իսկ գետաբերանում— 10 կիլոմետր:

Բրազիլիայի լեռնաշխարհը բռնում է յերկրի հարավային կեսը. Լեռնաշխարհի հյուսիսային մասը նույնպես գտնվում է արևադարձային գոտում, բայց ավելի քիչ տեղումներ է ստանում, քան թե Ամազոնի հարթավայրը: Այստեղ գերակշռում է արևադարձային անտառատափաստանը կամ Սափանան: Տեղ—տեղ աճում են անտառներ: Բրազիլիայի լեռնաշխարհի հարավային մասը ընկած է յենթաարևադարձային գոնայում, ունի տաք և չոր ձմեռ և անձրևոտ ամառ: Սա սուրճի ծառերի գլխավոր շրջան է: Այդ շրջանի կենտրոնն է Սան—Պաուլոն: Բրազիլիայի հարավային մասի ափին գտնվում է նրա մայրաքաղաքը՝ Րիո—Դե—ժանեյրոն: (1,7 միլ. բնակիչներ):

Բրազիլիայի լեռներում գտնվում են յերկաթահանքի և մարգանցի խոշոր հանքեր: Կան նաև ալմաս և վոսկի:

Բնակչության թվի տեսակներից (45—միլ.) Բրիտանիայի Ծրանսիայի և Իտալիայի հետ կանգնում է մի շարքում, թեպետ տարածությունը մի քանի անգամ գերազանցում է նրան (Ծրանսիային՝ 17—անգամ, Իտալիային՝ 35—անգամ): Բնակչությունը կենտրոնացված է գլխավորապես հարավ—արևելքում: Հնդկացիները և Մետիսները կազմում են ազգաբնակչության մոտ 45 տոկոսը, կրեոլները և ուշ վերաբնակության յեկած յեվրոպացիները (փորթուգալացիներ, իտալացիներ, իսպանացիներ, գերմանացիներ) —36— տոկոսը, նեգրերը և մուլատները՝ 19—տոկոսը: «Գունավոր» բնակչությունը իր մասնաթյով գյուղացիներ, բարձրակներ և բանվորներ են, կալվածատերերը և բուրժուազիան կրեոլները և յեվրոպացիները: Պետական լեզուն փորթուգալիկանն է: Չեզանքներն Բրազիլիան ինքնուրույն հանրապետու-

թյուն է, բայց փաստորեն կախյալ յերկր է: Մինչ վերջին ժամանակները նրանում տիրապետությունը պատկանում էր Անգլիական կապիտալին, վերջ հետ մրցում էր ԱՄՆ—ի կապիտալը: Վերջին տարիներում Բրազիլիան թափանցեց Ֆաշիստական Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի կապիտալը, յերկրներ վորոնց հետաքրքրում է Բրազիլիայի հումուլթային և անդամթերթային ռեսուրսները:

Թեպետ Բրազիլիան սահմանադրությամբ բուրժուական ֆեդերատիվ հանրապետություն է (20—նահանգից կազմված), փաստորեն այնտեղ 1937 թվից Ֆաշիստական ուժեր է ստեղծված: Ֆաշիստական Գերմանիայի փորձը Բրազիլիայում իշխանություն դուրս դնել իր մարդկանց, հանդիպեց ԱՄՆ—ի դիմադրությանը և անհաջողություն կրեց:

Բրազիլիայի տնտեսությունը ծայր աստիճան հետամնաց է: Զարգացած է միայն հանութային արդյունաբերությունը, (մարդանցի, յեկաթահանքերի, վոսկու հանույթը) և տեքստիլ արդյունաբերությունը: Գյուղատնտեսության մեջ գլխավոր դեր է խաղում սուրճի ծառի մշակումը: Բրազիլիան տալիս է կաֆեյի համաշխարհային հավաքի ¾-ը: Բրազիլիան սուրճը արտահանում է ուրիշ յերկրներ: Բրազիլիայի յերկրորդական կուլտուրաներն են՝ բամբակը, կակաոն, կաուչուկատուն: Տնտեսությունը վարում են կամ խոշոր պլանտատորները— կրեոլները և ոտարյերկա (առանձնապես անգլիական) կապիտալիստները՝ բարձրակների միջոցով կամ մանր հողատերերի վրա գյուղացիները, վորոնք սովորաբար վարձակալում են հողը կալվածատերերից:

## Ա Ր Գ Ե Ն Դ Ի Ն Ա

— Տարածությունը— 2,8 միլ. քառ. կմ. բնակչությունը— 12 միլ. մայրաքաղաքը— Բոննոս—Այրես:

Արգենտինան ղրաղեցնում է հարավային ամերիկայի հարավային մասը, բացի Անդեի (Կորդիլեր) ինչպես օվկիանոսի մոտ գտնվող նեղ յերտերից, վորտեղ տեղափոխված է Զիլիե հանրապետությունը:

Արգենտինայի հյուսիսային և միջին մասը կապաույան հարթավայրն է, վորը վորոգված է Պարանա գետով, Պարագվայ և



Ուրագլայ վտակներով: Հարթավայրը ընկած է յենթաարևադարձային զոնայում, իսկ հյուսիսում մտնում է արևադարձային գոտին:

Լապրատյան հարթավայրի հյուսիսային մասը ծածկված է անտառներով և սավաններով, իսկ հարավային մասը ներկայացնում է իրենից այսպես կոչված Պամպայի (կամ Պամպասներ) տափաստանը: Դա յերկրի հողագործական, անասնապահական հիմնական շրջանն է: Այդ տեղ զտնվում են գլխավոր քաղաքները, այդ թվում մայրաքաղաքը— Բոենոս— Այրես (3-միլ. բնակչություն): Հարթավայրի հարավում Անդերի ստորոտում— կիսաանապատ է:

Արգենտինայի հարավում Պատագոնյան սարահարթն է: Դա չոր տափաստան է, վորը արոտատեղի չէ ծառայում վոջխարներին համար: Հենց այստեղ, ափին մոտ, մշակվում են նավթի հանքեր:

Ի տարբերություն Մեքսիկայի, Բրազիլիայի և Լատինական Ամերիկայի մյուս յերկրների, Արգենտինայում քիչ հնդկացիներ և մետիսներ են ապրում: Բնակչության ճնշող մեծամասնությունը (97 տոկոսով)— սպիտակներ են. կրեոլներ, Յեմբոպայից ուշյեկած վերաբնակիչներ: Պետական լեզուն իսպաներեն է:

Արգենտինան բուրժուական հանրապետություն է: Ինչպես Բրազիլիան՝ նա ևս կախված է Անգլիայի և ԱՄՆ-ի կապիտալից: Վերջին ժամանակներս այնտեղ ուժեղացել է ֆաշիստական Իտալիայի ազդեցությունը:

Արգենտինան Լատինական Ամերիկայի մյուս յերկրներից ավելի զարգացած է, բայց և նրանում էլ արդյունաբերությունը աննշան է, կան նավթահանքեր, անասնապահանոցեր, մսակոնսերվային և վալվեղենի գործարաններ: Արգենտինայի գյուղատնտեսության մեջ, ինչպես և Բրազիլիայում, իշխում են կալվածատերերը, վորոնք հողագործ գյուղացիներին պահում են կիսատրկային պայմաններում:

Արգենտինայում ցանում են գլխավորապես ցորեն և յեգիպտացորեն, պահում են անասուններ, հատկապես վոջխար: Արգենտինան արտահանում է շատ ցորեն, բուրդ, միս և մորթի:

ՄՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ.— 1. Բնութագրեցեք Կանադայի, ԱՄՆ-ի, Մեքսիկայի, Բրազիլիայի և Արգենտինայի կլիման և բուսականությունը:

2. Ինչպիսի ողտակար հանածոներով և հարուստ ԱՄՆ-ը, ինչպիսիներով Մեքսիկան և Բրազիլիան:

3. Ինչպիսի ազդեցություններ են ապրում ԱՄՆ-ում, Կանադայում, Մեքսիկայում, Բրազիլիայում և Արգենտինայում: Վոր լեզուն և հանգիստնում պետական՝ այդ յերկրներից յուրաքանչյուրում:

4. Նկարագրեցեք ԱՄՆ-ի տնտեսությունը (կապիտալիստական զարգացման մակարդակը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը):

5. Մենք ինչպիսի յերեք տնտեսական շրջանների յենք բաժանում ԱՄՆ-ը: Վորն է ամենայականը այդ շրջաններից յուրաքանչյուրի համար: Այդ շրջաններից ամեն մեկում ինչ քաղաքներ կան: Ինչ գաղութներ են պատկանում ԱՄՆ-ին:

6. Վոր յերկրների կապիտալիստներն ազդեցություն ունեն Կանադայում, Մեքսիկայում, Բրազիլիայում և Արգենտինայում:

7. Ինչպես է վարվում գյուղատնտեսությունը Կանադայում: Նրա ինչպիսի մթերքներն են արտահանվում:

8. Ինչպես է վարվում գյուղատնտեսությունը Մեքսիկայում, Բրազիլիայում և Արգենտինայում: Բնութագրեցեք այդ յերկրներում գյուղացիության վիճակը:

Այդ յերկրները գյուղատնտեսության ինչպիսի մթերքներ են արտադրում և արտահանում:

9. Թվեցեք և ցույց տվեք քարտեզի վրա Արգենտինայի, Բրազիլիայի, Մեքսիկայի և Կանադայի մայրաքաղաքներն ու գլխավոր քաղաքները:



Ավստրալիան ամենափոքր մայր ցամաքն է: Առաջադ ուկլիսանոսի՝ նրան պատկանող մի ընդհանուր անունով ուկլիսանոսներ կոչված կղզիների հետ միասին նա բռնում է 8,8 միլ. քառ. կմ.:

Ավստրալիան վոլդովում է խաղաղ և Հնդկական ուկլիսանոսներով: Նրանցից դեպի հյուսիս ընկած են Ինդոնեզիայի կղզիները, դեպի հյուսիս—արևելք՝ մեծ կղզի Նոր Գվինեյան, դեպի հարավ Տասմանա կղզին:

Ավստրալիան կենտրոնում ցածրացած սարահարթ է: Արևելքում անցնում են Ավստրալիական Ալպեր լեռները (1,5—2,2 կմ. բարձր.):

Ավստրալիայի մեծ մասը ընկած է յենքաաքևադարձային գոտում, իսկ քիչ մասը՝ (հյուսիսային արևադարձային գոտում: Միայն հյուսիսային ափին (վորտեզ փչում են մուսսոններ) և Ավստրալիական Ալպերի արևելյան լանջերին թափվում են շափազանց շատ անձրևներ: Մայր ցամաքի մեծ մասը ունի չոր, ցամաքային կլիմա:

Հյուսիսը իրենից ներկայացնում է անտառատափաստան—սավաններ, հարավը—կիսաանապատ, չոր տափաստան՝ փոշոտ մացառներով և փշախոտերով: Կենտրոնում և հյուսիս—արևմուտքում ընկած է մի մեծ ավազոտ անապատ: Անտառները գտնվում են արևելքում:

Ավստրալիական անտառներում յուրատեսակ բույսեր կան, եփկալիսաններ, վորոնք շատ արագ են աճում (տարեկան մի մետր) և հասնում հսկայական բարձրության. ծառատեսակ ձախորդներ, շշային ծառեր, և այլն: Հյուսիս, ափին կան արադարձային ծառեր (արմալենիներ և այլն):

Ավստրալիայում հանդիպում են և վայրենի կենդանիների յուրատեսակներ, պարկավոր կենդանիներ, վորոնք կրծքի վրա պարկեր ունեն՝ ձագերին կերակրելու համար, (կենգուրու, պարավոր արջ, պարկավոր գալ, պարկավոր առնետ), բադակուց, վորըձվեր և ածուձ. ինչպես թռչուն, բայց կերակրում է ձագերին կաթով, յուրատեսակ թռչուններ՝ թռվիակ, ոպիտակ արծիվ, սե կաբալ, եմու (անթև ջայլամ):

Ավստրալիայի դետերը սակավաշուր են: Նրանցից գլխավորը Մուրեյն է: Շատ դետեր ամառը ցամաքում են: Նրանց անվանում են «կրիքներ»:

Ավստրալիան հարուստ է հանածոներով՝ վոսկով, արծաթով, ածխով, յերկաթով: Դրանց հանքերը գտնվում են հարավ—արևելքում, ալպերի լանջերին մոտ: Վոսկի կա նաև արևմուտքում:

Բնիկ ազգաբնակչուկյունը, — մուգ մորթի ունեցող Ավստրալիացիք, — այժմ կազմում են միայն 60 հազար մարդ՝ 7 միլիոն բնակչության ընդհանուր թվից: Հիմնական մասան Յեվրոպայից յեկած վերաբնակիչներ են, գերազանցապես Մեծ Բրիտանիայից: Նրանք վոչնչացրին տեղական բնակչության մի մասին և մնացածին ել քչեցին սավաններն և անապատները, իսկ իրենք բնակեցրին լավ շրջանները՝ արևելքը և հարավ արևելքը: Այստեղ ել ստեղծվեցին մեծ քաղաքներ—Սիդնեյը և Մելբուրնը:

Ավստրալիան բրիտանական դոմինիոն է, վորը կրում է Ավստրալիական միության անունը: Դոմինիոնի պատկանելություն և կառավարությունը գտնվում են Կամբերա մայրաքաղաքում: Ավստրալիական միության կազմի մեջ է մտնում Նույնպես Տասմանիան և վորպես զաղութ Նոր Գվինեայի արևելյան կեսը (արևմտյանը պատկանում է Հոլանդիային):

Բնակչուկյունը գլխավորապես պարապում է գյուղատնտեսությամբ: Տապատոտաններում և սավաններում պահվում են վոչնչախարենի վիթխարի հոտեր, վորոնց ջրելու համար փորված են շատ արտեզյան հորեր: Պահվում են նույնպես խոշոր յեղջերավոր անասուններ: Հարավ—արևելքում ցանում են ցորեն, աճեցնում են մրգատու ծառեր և խաղող, հյուսիս—արևելքում՝ չաբարեղեղ:


Վոչխարի բուրդը, տափարի և վոչխարի միսը, կաթը, յուղը



և ցորենը արտահանում են Անդլիա (միսը և յուղը չողենալներ՝ սառցարանների միջոցով) :

Ալստրալիայի գյուղական տերերի մի մասը միջին և մանր ֆերմաներ են, մյուս մասը՝ խոշորագույն հողատերեր (սկզբատերներ), վորոնք տնտրվում են հազարավոր հեկտար հողեր և հազարավոր դուլի անասունների: Նկար 18)

Ալստրալիայում արդյունաբերությունը յերկրորդական դեր է խաղում: Արդյունաբերության մյուս տեսակետից դարգացած են՝ ածխի, վոսկու, արծաթի հանույթները և ալյուրացային ու մսի արդյունաբերությունը:



Նկար 18. Ալստրալիան և նրա մոտ ընկած կղզիները:

**ՍՏՈՒԳԻԶ ՀԱՐՅԵՐ.**— 1. Ինչպես են Ալստրալիայի կլիման և բուսականությունը: Ինչու՞ն է դրանովորվում նրա բուսական և կենդանական աշխարհի յուրատեսակությունը:

2. Ինչ բնակչություն կա Ալստրալիայում:

3. Բնութագրե՞ցեք Ալստրալիայի տնտեսությունը և քարտեզի վրա ցույց տվե՞ք նրա կարևորագույն բաղադրիչները:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՁ

|                                       |              |
|---------------------------------------|--------------|
| <b>ԱՍԻԱ</b> . . . . .                 | <b>I—42</b>  |
| ՀԱՄԱՌՈՏ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ     | 3            |
| <b>ԹՅՈՒՐԲԻԱ</b> . . . . .             | 6            |
| ԱՐԱՐԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐ                     | 9            |
| ԻՐԱՆ (ՊԱՐՍՎԱՍՏԱՆ)                     | 12           |
| ԱՎԱՆՍՏԱՆ                              | 14           |
| ՀՆԴԱՍՏԱՆ                              | 16           |
| ՀՆԴԱՋԻՆԻ ՅԵՎ ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻ ՅԵՐԿՐՆԵՐԸ    | 20           |
| ԶԻՆԱՍՏԱՆ                              | 23           |
| ՄՈՂՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ |              |
| ՏՈՒՎԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ   | 33           |
| ՃԱՊՈՆԻԱ                               | 36           |
| <b>ԱՖՐԻԿԱ</b> . . . . .               | <b>43—53</b> |
| ՄԻՋԻՆ ԱՖՐԻԿԱ                          | 43           |
| ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ                    | 47           |
| ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՖՐԻԿԱ                      | 51           |
| <b>ԱՄԵՐԻԿԱ</b> . . . . .              | <b>54—82</b> |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՌՈՒՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ    | 54           |
| ԿԱՆԱԴԱ                                | 59           |
| ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՋՑԱՆ ՆԱՀԱՆԿՆԵՐ (ԱՄՆ)      | 63           |
| ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՅԵՐԿՐՆԵՐԸ         | 74           |

ՊԱՏ. ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝ Ս. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, Գ. ԶՈՂՐԱԲՅԱՆ ՏԵԽ. ԽՄԲԱԳԻՐ՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գլավիտի լիազար՝ Ե 2240 պատ. № 336 տիքամ 200)  
Հայկական ԽՍՀ ԺԿԻ-ի կրտսերակարգի մանկավարժական հաստատում-ի տպարան Յերեվան



Հայաստանի Ազգային գրադարան



NL0429627



169

10584

214

**Н. С. ДОБРОВ**

География 2-ой выпуск Азия (без СССР), Африка, Америка, Австралия.

Издательство СНК Армянской ССР „Хорурдани Айастан“  
Ереван—1939